# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻ 27 (1677) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 19, 2014
VOLUME 34, NO. 27 (1677) SATURDAY, JULY 19, 2014

MASSIS Weekly
1060 N. Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Նախագահ Օպամա Կարեւոր Կը Նկատէ Հայաստանի Հետ Յարաբերութիւնները



ՀՀ նորանշանակ դեսպան Տիգրան Սարգսեան Սպիտակ Տան մէջ նախագահ Պարաք Օպամային իր հաւատարմագիրը յանձնելու արարողութեան ընթացքին

Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ դեսպան Տիգրան Սարգսեան Յուլիս 14-ին իր հաւատարմագիրը յանձնած է Նախագահ Պարաք Օպամային:

Հաւատարմագիրի յանձնման պաշտօնական արարողութեան ընթացքին դեսպան Սարգսեան յայտնած է, որ հայ-ամերիկեան յարաբերութիւնները կ՚առանձնանան բարձր մակարդակով եւ արդիւնաւէտ համագործակցութեամբ: ՀՀ դեսպանը աւելցուցած է, որ երկու երկիրներու միջեւ առկայ է յարաբերութիւններու զարգացման մեծ ներուժ, եւ իր առաքելութիւնը ուղղուած պիտի ըլլայ փոխշահաւէտ համագործակցութեան զարգացման եւ փոխգործակցութեան շրջանակի ընդլայնման ուղղութեամբ:

Ողջունելով եւ շնորհաւորելով Տիգրան Սարգսեանին դիւանագիտական առաքելութեան մեկնարկի առթիւ, Ամերիկայի Նախագահը վստահութիւն յայտնած է, որ Հայաստանի նորանշանակ դեսպանը իր հարուստ փորձն ու գիտելիքները լաւագոյնս կը ծառայեցնէ երկու բարեկամ ժողովուրդներու միջեւ յարաբերութիւննե-

Շար.ը էջ 4

## Ատրպէյճանի հետախոյզներու խումբի անդամները ձերբակալուած են



Գերի ինկած ատրպէյճանցի հետախոյզը եւ անոր մօտ գտնուած զինամթերքը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ընդհանուր դատախազութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, բացայայտելու համար Արցախի սահմանները ապօրինի միջոցներով հատած եւ հայկական ուժերուն մօտ գերի ինկած երկու ատրպէյճանցի հետախոյզներու ձերբակալման գործողութիւնը եւ անոնց մօտ գտնուած զէնքի ու զինամթերքի տեսակն ու քանակը:

Հաղորդագրութեան համաձայն, ատրպէյճանցիները զինուած էին ինքնաձիգ զէնքերով եւ ատրճանակներով: Առաջին հետախոյզի ձերբակալութենէն ետք, հայկական ուժերը վնասազերծերծած են նաեւ երկրորդ ատրպէյճանցի մը, առանց զէնքի ուժի գործածութեան: Անոնց հետ սահմանները հատած երրորդ զինեալ մը ոչնչացուած է հայկական ուժերու գործողութիւններուն շնորհիւ՝ Քարվաճառ-Վարդենիս մայրուղիին վրայ:

Ընդհանուր դատախազութեան համաձայն, ձերբակալեալներուն մօտ գտնուած սարքերը կ՚ապացուցեն որ, անոնք Արցախ ներթափանցած էին հետախուզական-լրտեսական գործողութիւն կատարելու համար:

Ատրպէյճանցիները սահմանները հատած էին Յունիս 11-ին: Նոյն ծիրին մէջ, բացայայտուեցաւ Յունիս 4-էն ի վեր անյայտ կորսուած Քարվաճառի բնակիչ Սմբատ Ցականեանի մարմինը: 17 տարեկան պատանին, ըստ նախնական տուեալներու, սպաննուած է վերոյիշեալ հետախոյզներուն ձեռամբ: Անոր մարմնին վրայ գտնուած են դաշունահարման հետքեր»:

Հայաստանի Պաշտպանութեան

Շար.ը էջ 5

## Ատրպէյճան Նոր Առաջարկներու Կը Սպասէ

Հայաստանեան «Հրապարակ» թերթը կը հաղորդէ որ, ըստ ԱՄՆ դեսպանատան մօտ կանգնած աղբիւրներու, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանտի այցը տարածաշրջան առաջին հերթին պայմանաւորուած է ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման խնդիրով: Որպէս համանախագահ երկիր, Ֆրանսա կ՚ուզէ գլխաւոր դերակատարութիւն ստանձնել, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հանդիպումը կազմակերպելու եւ գործընթացը ԵԱՀԿ Մինսկի Խումբի «հսկողութեան» տակ պահելու համար:

Փարիզի մէջ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման ժամանակ Օլանտի կատարած առաջարկին Սերժ Սարգսեան առանց այլեւայլութեան տուած էր իր նախնական համաձայնութիւնը: Ըստ նոյն աղբիւրներուն, Ալիեւ նոյնպէս համաձայնած է, սակայն որոշ զարգացումներէ յետոյ, յատկապէս Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Լաւրովի Ատրպէյճան կատարած այցելութենէն ետք, ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը Մամեդեարով ֆրանսական եւ ամերիկեան կողմերուն հասկացուցած է, որ իրենք համաձայն են, եթէ ըլլան նոր եւ յստակ՝ ատրպէյճանի համար նպաստաւոր առաջարկներ:

Ֆրանսա եւ Ամերիկայ կ՚ուզեն Փարիզի մէջ ոչ միայն հանդիպում կազմակերպել, այլ նաեւ անպայմանօրէն ինչ-որ «Թուղթ» ստորագրել տալ կողմերուն եւ ուր կողմերը կը վերահաստատեն տագնապի խաղաղ լուծման իրենց համաձայնութիւնը: Սակայն այս մէկը չի բաւարարեր ատրպէյճանական կողմին, որ լուրջ խաղերու մէջ է ռուսական կողմին հետ:

Իսկ «Հայկական Ժամանակ» թերթը կը գրէ որ, «Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը կազմակերպելու Ֆրանսիայի նախագահի առաջարկութեան շուրջ տակաւին կարելի չէ եղած համաձայնութեան հասնիլ:

Սարգսեան-Ալիեւ այս հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի Խումբի համանախագահները կարեւոր կը նկատեն, յատկապէս վերջին շրջանին զինադադարի խախտման եւ սահմանին վրայ աճող լարուածութեան լոյսին տակ:

## Մոսկուայի Մէջ Ձերբակալուած Է Արցախցի Բարերար Լեւոն Հայրապետեանը

Ռուսաստանի Անվտանգութեան Դաշնային Ծառայութեան աշխատակիցները Մոսկուայի մէջ ձերբակալած են մեծահարուստ արցախցի գործարար եւ բարերար Լեւոն Հայրապետեանին:

Ըստ ռուսական լրատուամիջոցներուն, ձերբակալութիւնը կատարուած է յանցաւոր խմբաւորման մը հետ կապուած գործի շրջագիծէն ներս:

Ռուսական յատուկ ծառայութիւնները հաղորդած են, որ Լեւոն Հայրապետեանը ձերբակալուած է Յուլիս 15-ին , «Դոմոդեդովօ» օդանաւակայանին մէջ, ուր ան ժամանած էր Մոնաքոյէն:

Յատուկ հսկողութեան տակ գործարարին տարած են հարցաքննութեան: Այնտեղ յայտարարած է անոր ձերբակալութիւնը եւ յառաջիկայ օրերուն քննիչները մտադիր են միջնորդութիւն ներկայացնել դատարան՝ Հայրապետեանին կալանաւորելու համար:

Հայ գործարարին ձերբակալելու գործողութիւնը տեղի ունեցած է քրէական հեղինակութիւն Սերգէյ Ֆինագինի ղեկավարած յանցաւոր խմբաւորման գործի քննութեան շրջանակներէն ներս: Այդ խմբաւորման հետ Հայրապետեանի ունեցած հաւանական կապի մասին քննիչներուն տեղեկացուցած է նախկին ծերակուտական Իգոր Իզմեստեւ, որը այժմ ցմահ բանտարկութեան դատապարտուած է:



Արցախցի բարերար Լեւոն Հայրապետեան

Լեւոն Հայրապետեան աշխարհի տասը ամենահարուստ հայերու շարքին է:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Աղբիւրի Պահանջ

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Երբ մեր լրատուամիջոցում չինովնիկների կամ օլիգարխների մասին բացասական տեղեկատուութիւն է հրապարակւում, լուրի «հերոսները» սովորաբար չեն պնդում, որ դա սուտ է, հերքումն էլ նրանց առանձնապէս չի հետաքրքրում: Միակ հարցը, որն այդ պարագայում նրանց մօտ ծագում է, հետեւեալն է՝ ո՞րն է տեղեկատուութեան աղբիւրը: Մօտ 20 տարի խմբագիր աշխատելով՝ ես առաւել յաճախ լսել էի հենց այդ խնդրանքը. «Ինձ հերքում-մերքում պէտք չի, դու ինձ մենակ ախպերավարի ասա՝ էդ գործը, էդ զակազը իմ դէմ ո՞վ ա տուել»: Այս հարցն ունի իր տրամաբանութիւնը: Պաշտօնեաների եւ հարուստների միջավայրում ընդունուած բարքերն այնպիսին են, որ նրանք մի կողմից՝ իրար փաթաթւում են խնճոյքների սեղանի շուրջ, միւս կողմից՝ իրար տակ են փորում եւ իրարից բամբասում են՝ այդ սեղաններից դուրս: Եւ այդ մարդիկ, հաւանաբար, խնդիր ունեն իմանալու, թէ որտեղի՞ց է գալիս վտանգը եւ իրենց «բաժակի ընկերներից» ո՞ր մէկն է դաւեր նիւթում:

Ահա թէ ինչի համար է նրանց, որպէս կանոն, պէտք լինում տեղեկատուութեան աղբիւրի բացայայտումը: Բայց դա մեր՝ լրագրողներիս խնդիրը չէ: Մենք ընդամէնը տեղեկատուութիւն ենք հաղորդում: Ի հարկէ, ցանկալի է այն ստուգել. եթէ Պօղոսը, ցանկանալով անյայտ մնալ, ինֆորմացիա է հաղորդում իր «բաժակի ընկեր» Պետրոսի մասին, ապա մենք կարող ենք ենթադրել, որ նա շահագրգռուած անձ է, եւ լաւ կը լինի գտնել ինչ-որ մի կիրակոսի, որն այդ լուրը կը հաստատէր: Բայց հաստատում չստանալու դէպքում էլ դա արժէ հրապարակել՝ ստանալով Պետրոսի պարզաբանումը: Այս «վերնախաւի» ներկայացուցիչները պէտք է հասկանան, որ իրենք հանրային դէմք են, եւ նրանց նկատմամբ հետաքրքրութիւնը բնական է, կարելի է ասել՝ այն գինն է, որն իրենք վճարում են իրենց ճոխ կեանքի համար: Այդ մարդիկ ուզում են անարգել վայելել այս կեանքը, որպէսզի ոչ ոք իրենց անհանգստութիւն չպատճառի: Դատախազները, դատաւորները իրենց գրպանում են, նրանք մի թիմ են, մի, այսպէս ասած, գրասենեակ: Բոլոր գործիքները հանգիստ կեանք ապահովելու համար կան:

Մնում է մտածել մեթոդների մասին: Կարելի է, իհարկէ, զրպարտութեան համար դատի տալ եւ 6 միլիոն դրամ պահանջել: Բայց ամէն մի նման դատավարութեան ժամանակ «զրպարտուած» եւ «նեղացած» օլիգարխի կամ պաշտօնեայի անունը «հոլովւում» է բոլոր լրատուամիջոցների կողմից: Այն նոր տարբերակը, որը հիմա է ընտրուել՝ լրատուամիջոցից դատարանի միջոցով տեղեկատուութեան աղբիւրի բացայայտումը պահանջելը, աւելի «անվտանգ է»՝ իբր «նեղացածի» դէմ գործ է յարուցուել, եւ իբր այդ գործի շրջանակներում անհրաժեշտ է պարզել, բացայայտել, թէ ով է համարձակուել այդ անբիծ մարդու մասին տեղեկատուութիւն հաղորդել:

Հասարակութեան համար այս տարբերակը զգալիօրէն աւելի վտանգաւոր է, որովհետեւ ուղղուած է նրան, որ լրատուամիջոցներն իրենց մասին ընդհանրապէս որեւէ լուրջ տեղեկատուութիւն չհաղորդեն: Որովհետեւ եթէ մի որեւէ լրագրող կամ խմբագիր սխալուի եւ հրապարակի իր տեղեկատուութեան աղբիւրը, նա վատութիւն կ'անի ոչ միայն իր լրատուամիջոցին, այլեւ բոլոր մնացած լրագրողներին եւ խմբագիրներին: Չէ՞ որ այդ դէպքում մեզ ոչ ոք տեղեկատուութիւն չի վստահի:

«ԱՌԱՒՕՏ»

# Ո՞ւմ է Խանգարում Լեւոն Հայրապետեանը

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Ռուսաստանում ձերբակալուած հայազգի մեծահարուստ Լեւոն Հայրապետեանի ձերբակալութեան լուրը, իսկապէս, անսպասելի էր: Զխախտելով անմեղութեան կանխավարկածը եւ սպասելով իրադարձութիւնների զարգացմանը, այդուհանդերձ այս ձերբակալութեանը զուտ իրաւական հիմնաւորում տալ էլ չի կարելի: Առաւել եւս, որ նա տարածուած լուրերի համաձայն ձերբակալուել է Ռուսաստանում, որտեղ նման կարգի անձանց ձերբակալութիւնները երբեք զուտ իրաւական թելադրանքով չեն կատարւում: Արդէն իսկ կասկածներ կան, որ փորձ է արւում «սարքել» գործարարի գլխին:

Ձերբակալութեան մասին լուրը տարածել է ռուսական rosbalt.ru կայքը , գրելով, թէ երէկ Մոսկուայի ««Դոմոդեդովօ»» օդանաւակայանում «Կինգիսեպսեան» յանցաւոր խմբաւորման գործունէութեան հետաքննութեան շրջանակներում կալանաւորուել է գործարար եւ բարեգործ Լեւոն Հայրապետեանը, որն իբր ժամանել էր Մոնակոյից: Մինչդեռ Nyut.am-ի տուեալներով՝ Լ. Հայրապետեանին իր ընկերները երէկ են Երեւանից ճանապարհել Մոսկուա: Նա չէր կարող Մոնակոյում լինել:

Հայրապետեանը ծնունդով Լեռնային Ղարաբաղից է՝ Վանք գիւղից, որը յայտնի է Գանձասարի համալիրով: Լեւոն Հայրապետեանն էլ հայ հասարակութեանը յայտնի դարձաւ Վանքի, Գանձասարի, ու առհասարակ Ղարաբաղի համար կատարած իր բարեգործական եւ ներդրումային ծրագրով: Պէտք է ասել, որ անուրանալի է նրա կատարած գործը Արցախում, ժամանակին մօտ 700 ղարաբաղցի զոյգերի ամուսնութիւնը կազմակերպելով նա ծրագրել էր նաեւ 2800-ի համար էլ համազգային հարսանիք կազմակերպել: Այս գործարարը հայկական իրականութիւնում «սպիտակ ագռաւ» է յիշեցնում, ով բացառիկ է իր կարգավիճակի ու տեսակի մէջ; Նա այն քչերից է, ովքեր լինելով աշխարհի հարուստներից մէկը, անքակտելի կապերով կապուած չէ հայաստանեան իշխանութիւնների հետ եւ այդ կապը չէ, որ նրան այդպիսի կարգավիճակ է շնորհել: Ուստի Լեւոն Հայրապետեանը այն քչերից է, ով յաճախակի է սառը ցնցուղ ապահովում Հայաստանի իշխանութիւնների գլխին ու սթափեցնում վերջիններին: Նա բաւական բաց եւ թափանցիկ կերպով է արտայայտուել Հայաստանում օլիգարխիկ համակարգի չէզոքացման անհրաժեշտութեան, կոռուպցիայի դէմ պայքարի անհրաժեշտութեան մասին՝ այդ ամէնը դիտարկելով Հայաստանի զարգացման համատեքստում, այդ զարգացումը համարելով Հայաստանի միակ շանսը տարածաշրջանային եւ համաշխարհային մրցակցութիւնում: «Երբ նայում ես Հայաստանին դրսից՝ սփիւռքահայի հայեացքով, մազերդ բիզ-բիզ են կանգնում»: Տակաւին անցած տարի Լեւոն Հայրապետեանը յայտարարել է, որ իշխանափոխութիւնը ՀՀ-ում պէտք է տեղի ունենայ 20 րոպէում, որ չվերածուի յեղափոխութեան, ու «մեր թշնամիները չուրախանան»: Ըստ էութեան, նա այն եզակի մեծահարուստն էր Ռուսաստանից, որն աչքի ընկաւ Հայաստանի իրավիճակի մասին նման գնահատականներով: Ռուսաստանում հայազգի միւս միլիարդատէրերն ու մուլտիմիլիոնատէրերը սովորաբար աչքի են ընկել հայաստանեան օլիգարխիկ համակարգի հետ իրենց սերտ կապերով: Այս ձերբակալութեան մոտիվները հաւանաբար ի յայտ կը գան առաջիկայում, որոշ շրջանակներ, սակայն, չեն բացառում, որ Լեւոն Հայրապետեանի ձերբակալութիւնը կապուած է Արցախի շուրջ ակտիւացած գործընթացներով եւ գործարարին թէկուզ տեւական ժամանակ փորձում են մեկուսացնել:

«ՀԱՅԵԼԻ»

# Ով Եւ Ինչո՞ւ Է Փորձում Խուճապ Առաջացնել Հայաստանում

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Ինչո՞ւ Սերժ Սարգսեանը, Յուլիսի 12-ին աւարտելով շրջագայութիւնը Հարաւային Ամերիկայում, այդպէս էլ չմեկնեց Պրազիլիա, աշխարհի առաջնութեան եզրափակիչին: Արդեօք աւելի կարեւոր գործեր ունէր: Կամ, գուցէ չէր ցանկանում այնտեղ հանդիպել տարբեր երկրների ղեկավարների, օրինակ՝ Փութինին:

Սերժ Սարգսեանը Փութինի հետ չհանդիպելու բաւականաչափ «պատճառներ» ունի: Անցած շաբաթներին Հայաստանը մի քանի անգամ մերժել է Ռուսաստանին: Նախ, հրաժարուել է անդամակցել Եւրասիական Միութեանն ուրիշի պայմաններով՝ Գալուստ Սահակեանն ասել է, որ Հայաստանի ու Ղարաբաղի սահմանին մաքսակէտ չի դրուելու:

Հայաստանը հրաժարուել է ընդունել Ռուսաստանի խաղաղարարներին: Ի պատասխան ռուս փորձագէտների ու քաղաքական գործիչների ակնարկների, թէ Հայաստանը կարող է ռուս խաղաղարարներին հրաւիրել Ղարաբաղ, պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանը յայտարարել է, որ հայկական զօրքը լուծում է խնդիրները, եւ օտար խաղաղարարների կարիքը չկայ:

Հայաստանը մերժել է նաեւ Ռուսաստանի անուղղակի առաջարկը՝ հրաժարուել Մինսկի խմբից եւ ղարաբաղեան խնդրի լուծման լիազօրութիւնները փոխանցել Մոսկուային: Ուրուգուայի եւ Հայաստանի նախագահների համատեղ յայտարարութեան մէջ կայ հետաքրքիր տող՝ «Շեշտեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը բացառապէս խաղաղ բանակցային ճանապարհով, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդութեամբ կարգաւորելու անհրաժեշտութիւնը բացառապէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդութեամբ»:

Եթէ աւելացնենք նաեւ Սերժ Սարգսեանի յայտարարութիւնն Արգենտինայում, որ Հայաստանի ժողովուրդը մտահոգ է Ռուսաստանի կողմից Ատրպէյճանին զէնքի մատակարարումներով, ստացւում է ոչ այնքան հաճելի ֆոն Պրազիլիայում Փութինի ու Սարգսեանի հանդիպման համար:

Որքա՞ն հեռուն կը գնայ Հայաստանը, արդեօք Փութինը դադար կը վերցնի Երեւանի հետ յարաբերութիւններում: Իսկ գլխաւորը՝ ինչի՞ համար նա կ'օգտագործի դադարը՝ Հայաստանի վրայ աւելի մեծ ճնշում գործադրելո՞ւ, թէ իշխանութիւնը փոխելու նախապատրաստութեան վրայ:

Ճնշում արդէն հիմա գործադրւում է՝ Ատրպէյճանը Ռուսաստանի համաձայնութեամբ յաճախակիացրել է դիւերսիաները, փորձելով խուճապ առաջացնել, որպէսզի Հայաստանը դիմի Ռուսաստանին: Միայն այդ դէպքում Ռուսաստանը եւ ՀԱՊԿ-ը, չունենալով ՄԱԿ-ի խաղաղարար մանդատ, կարող են զօրք մտցնել հակամարտութեան գօտի:

Սակայն, ըստ ամենայնի, կայ նաեւ «պլան Բ-ն»՝ իշխանութեան փոփոխութիւնը, եւ այն գործի կը դրուի, եթէ չյաջողուի խուճապ առաջացնել հանրութեան մէջ եւ ստիպել Երեւանին օգնութեան համար դիմել Ռուսաստանին:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Իշխանութիւնը Փորձում է Սահմանափակել Մամուլի Ազատութիւնը

*Մամուլի Ազգային Ակումբը յայտարարութիւն է տարածել, որտեղ իր խոր մտահոգութիւն է յայտնում Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան առաջին ատեանի դատարանի որոշման կապակցութեամբ, որով «iLur.am» տեղեկատուական կայքին եւ «Հրապարակ» օրաթերթին պարտաւորեցւում է բացայայտել տեղեկատուութեան աղբիւրը: Յայտարարութեան մէջ ասւում է.*

*«Տեղեկատուական աղբիւրի բացայայտումը պէտք է լինի խիստ բացառիկ դէպքերում եւ հանրային անժխտելի շահի առկայութեան դէպքում: Մինչդեռ Գիւմրիի ոստիկանապետի՝ ՀՀ քաղաքացու վրայ զէնք ճօճելու համար յարուցուած քրէական գործը, ՄԱԱ համոզմամբ, նման բացառիկ դէպք չէ եւ չի կարող տեղեկատուական աղբիւրը բացայայտելու հանգամանք լինել, ուստի, հաշուի առնելով հայաստանեան իրականութիւնը, ՄԱԱ-ն վստահ է, որ տեղեկատուութեան աղբիւրի բացայայտումը կը վտանգի տուեալ անձի (կամ՝ անձանց) ֆիզիկական անվտանգութիւնը:*

*Տեղեկատուութեան աղբիւրի պաշտպանութիւնը լրագրողի պրոֆեսիոնալիզմի եւ մասնագիտական արժէքների ու սկզբունքների պահպանման գրաւական է, եւ հարկ է յարգանքով մօտենալ տեղեկատուութեան աղբիւրի գաղտնիութեան ապահովման՝ լրագրողների ձգտմանը՝ հասարակութեան շահերի ի պաշտպանութեան եւ պետական իշխանութեան ներկայացուցիչների վարքագծի բացայայտման նպատակով:*

*ՄԱԱ-ն պահանջում է վերաքննիչ դատարանից վերանայել դատաւոր Գագիկ Խանդանեանի կայացրած որոշումը, իսկ Արդարադատութեան խորհրդին՝ կարգապահական վարոյթ սկսել դատաւորի նկատմամբ՝ պարզելու համար, թէ ինչով է պայմանաւորուած առանց «Հրապարակի» եւ «iLur.am»-ի ներկայացուցիչների մասնակցութեամբ դատաքննութեան անցկացումը:*

*Մամուլի ազգային ակումբը կարծում է, որ տեղեկատուական աղբիւրը բացայայտելու այս նախադէպով գործող իշխանութիւնը փորձում է սահմանափակել տեղեկատուութիւն ստանալու եւ տարածելու մամուլի ազատութիւնը եւ տեղեկատուութեան աղբիւրի պաշտպանութեան՝ լրագրողների իրաւունքը: Մամուլի ազգային ակումբը համոզուած է, որ նման որոշումն էլ աւելի կը մեծացնի հասարակութեան մէջ իրաւական վհատութիւնը՝ մարդկանց ստիպելով շարունակել արդարութիւն, օրինականութիւն եւ պաշտպանութիւն փնտռել Հայաստանից դուրս»:*

# Լեւոն Տէր-Պետրոսեանը ԱՄՆ Դեսպանին Ներկայացրել է Հայաստանի Իրավիճակը

*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը Յուլիսի 15-ին հանդիպել է Հայաստանում Ամերիկայի Միացեալ Նահանգների արտակարգ եւ լիազօր դեսպան Ջոն Հեֆերնի հետ՝ վերջինիս նախաձեռնութեամբ:*

*ՀԱԿ մամուլի ծառայութիւնից յայտնում են, թէ դեսպանի խնդրանքով, նախագահ Տէր-Պետրոսեանը ներկայացրել է Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, անդրադարձել երկրում տիրող համակարգային կոռուպցիային, մարդու իրաւունքների ոտնահարումներին, արտագաղթի չնուազող տեմպերին, ընտրութիւնների շարունակական կեղծման աւանդոյթին՝ դրանք համարելով Հայաստանի առջեւ ծառացած հիմնական մարտահրաւէրներ:*

*Առաջին նախագահը անդրադարձել է նաեւ ոչ իշխանական Քառեակի համագործակցութեանը, մասնաւորապէս իշխանութիւններին ներկայացուած 12 պահանջներին, ինչպէս նաեւ Քառեակի առաջիկայ անելիքներին:*

*Քննարկուել են նաեւ տարածաշրջանային համագործակցութեանն եւ անվտանգութեանն առնչուող խնդիրներ, մասնաւորապէս կապուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հետ:*

*Հանդիպմանը մասնակցել են ԱՄՆ դեսպանութեան առաջին քարտուղար Քրիստոֆեր Անդերսոնը, Հայ Ազգային Կոնգրէսի փոխնախագահ Լեւոն Զուրաբեանը եւ վարչութեան անդամ Աւետիս Աւագեանը:*

# «168 Ժամ». Որքա՞ն Գումար է Կանխիկացւում Արտասահմանում՝ Հայկական Քարտերով

*«168 Ժամ» թերթը գրում է. «ՀՀ քաղաքացիների բանկային հաշիւների սառեցման խնդրի համատեքստում բաւական յաճախ նշւում էր այն մարդկանց դժուարութիւնները, ովքեր արտասահմանում փորձում են օգտուել հայկական բանկերի կողմից տրամադրուած քարտերից եւ պարզում, որ հաշիւը սառեցուած է:*

*Այս տեսակէտներին ի պատասխան՝ ոմանք նշում էին, որ խնդիրն ուռճացուած է եւ ՀՀ քաղաքացիները արտասահմանում այդքան էլ շատ չեն օգտագործում բանկային քարտերը: Հիմնականում կանխիկով են վճարումներ կատարում:*

*Սա, իհարկէ, մոլորութիւն է: ՀՀ կենտրոնական բանկի Մայիս ամսուայ տեղեկագրում ներկայացուած տուեալների համաձայն՝ հայկական բանկերի կողմից թողարկուած քարտերով արտասահմանում բաւականին մեծ ծաւալով գործարքներ են իրականացւում:*

*Այս տարուայ առաջին 5 ամիսների ընթացքում արտասահմանում ՀՀ քարտերով կանխիկացուել է 9 միլիարդ դրամ:*

*Սակայն միայն կանխիկացումը չէ: ՀՀ բանկերի թողարկած քարտերը արտասահմանում օգտագործւում են նաեւ անկանխիկ գործառնութիւնների համար, որոնց ծաւալն աւելի մեծ է: Միայն Մայիս ամսին իրականացուել է աւելի քան 102 հազար անկանխիկ գործառնութիւն՝ 3.9 միլիարդ դրամ ընդհանուր ծաւալով: Առաջին 5 ամիսների ընթացքում 28 միլիարդ 481 միլիոն:*

# Ստուերից Դուրս Եկած Ընկերութիւնների Մէջ Օլիգարխներին Պատկանողներ Չկան

*Հայաստանեան 98 ընկերութիւններ Յուլիսի 1-ի դրութեամբ «ճշգրտել են» իրենց հարկային հաշուարկները, կամ ինչպէս տնտեսագէտներն են ասում՝ ինքնակամ դուրս են եկել ստուերից. այս ընկերութիւնների մասին տեղեկանում ենք հարկային ծառայութեան պաշտօնական էջից: Սրանք այն ընկերութիւններն են, որոնք տարեկան շահութահարկի հաշուարկներով 2014-ին շահութաբերութեան ցածր ցուցանիշ էին յայտարարագրել. մինչդեռ ճշգրտման արդիւնքում, ըստ հարկայինի, հաշուարկուել է 391 միլիոն 655 հազար դրամ լրացուցիչ շահութահարկ:*

*Այսպիսով, կարծես մասամբ իրականութիւն է դառնում վարչապետ Յովիկ Աբրահամեանի խոստումներից մէկը. Յուլիսի 1-ից սկսած իւրաքանչիւր տասնօրեակում հրապարակել ստուերի դէմ պայքարի արդիւնքները. այս մասին վարչապետը յայտարարել էր անցած ամսուայ վերջին «Դիջիթեք» բիզնես ֆորումի շրջանակներում լրագրողների հետ ճեպազրոյցում:*

*«Յուլիսի 1-ից տասնօրեակը մէկ հանրութեանը տեղեկացնելու ենք, թէ որ հարկատուն ինչքան հարկ է վճարում, եւ դուք կը համեմատէք, ընդհանուր տարբերութիւնը կը ֆիքսէք: Մենք լինելու ենք հետեւողական»,- ասել էր վարչապետը:*

*Յովիկ Աբրահամեանը, յիշեցնենք, դեռեւս Մայիսից է յայտարարում ստուերի դէմ խիստ պայքար սկսելու մասին: Մայիսի 14-ին խոշոր գործարարների հետ հանդիպմանը նա յստակ ժամկէտներ էր նշել, ասելով, որ մինչեւ Յուլիսի 1-ը կամ գործարարները սեփական ցանկութեամբ կը սկսեն աշխատել հաւասար դաշտում եւ դուրս կը գան ստուերից, կա՛մ այդ նպատակին հասնելու համար կառավարութիւնը կ՚օգտագործի իր լծակները:*

*Հարկայինի՝ նախօրէին հրապարակած ցանկում տեղ են գտել հաշուարկները ճշգրտած 98 ընկերութիւններից 15-ի անունները, որոնք ապահովել են լրացուցիչ հարկային մուտքերի մեծ մասը՝ 268 միլիոն 381 հազար դրամ: Դրանց շարքերում, սակայն շատ յայտնի օլիգարխների ու պաշտօնեաների, կամ նրանց հարազատներին պատկանող ընկերութիւններ կարծես չենք տեսնում:*

*Տնտեսական մեկնաբան Հայկ Գէորգեանի հաշուարկներով, այդ ընկերութիւնների ստուերից դուրս գալու արդիւնքում Հայաստանում ստուերը կրճատուել է ընդամէնը մէկուկէս տոկոսով:*

*«Ես ուսումնասիրեցի հրապարակուած այդ 15 ընկերութիւնների վճարած հարկերը անցած տարի եւ այն գումարները, որոնք առաջացան այս ստուերից դուրս գալու արդիւնքում, լրացուցիչ գումարներ նրանք վճարեցին պետական բիւջէ, ու ստացուեց, որ այդ լրացուցիչ վճարուածը կազմում է նրանց տարեկան վճարած հարկերի ընդամէնը մէկուկէս տոկոսը: Հայաստանում ստուերը, ըստ որոշ գնահատականների 30-35 տոկոս է, մէկ այլ գնահատականներով՝ հասնում է մինչեւ 45 տոկոս: Այսինքն, կարող ենք այսպէս ասել՝ ստուերը կրճատուել է մէկուկէս տոկոսով»,- նշել է Գէորգեանը:*

*«Հայկական ժամանակ»-ի մեկնաբանը նաեւ արձանագրում է, որ փաստօրէն խոշոր օլիգարխներից որեւէ մէկը պատրաստ չէ թէկուզ սեփական փիառի համար յայտարարել իր ընկերութիւններից որեւէ մէկի՝ ստուերից դուրս գալու մասին:*

# Սահմանամերձ Գիւղերի Բնակիչներին Պէտք է Զէնք Բաժանել

*Սահմանամերձ բնակավայրերի բնակչութեանը, յատկապէս, այդտեղ բնակուող պայմանագրային զինծառայողներին պէտք է տրուի թեթեւ մարտական զէնքը՝ ինքնաձիգը տանը պահելու եւ անհրաժեշտութեան դէպքում կրելու անսահմանափակ իրաւունք: Այս մասին իր ֆեյսբուքեան էջում գրել է քաղաքագէտ, Քարվաճառում բնակութիւն հաստատած Ալեքսանդր Քանանեանը:*

*«Երեւի թէ արդէն ժամանակն է մի շարք դատողութիւններ արտայայտել քարվաճառեան վերջին դէպքերի կապակցութեամբ:*

*Մռաւի լեռնաշղթայի գագաթներով անցնող հրադադարի գիծը, տեղանքի ծայրայեղ կտրտուածութիւնը եւ դիրքերի միջեւ առկայ տարածական ընդարձակ խոռոչները մեծապէս դիւրացնում են դիւերսանտ հետախոյզների ներթափանցումները, իսկ շրջանի թերբնակեցուածութիւնն էապէս բարդացնում է նրանց հետագայ յայտնաբերումն ու վնասազերծումը: Այսպիսի տեղանքում աշխարհի լաւագոյն բանակն անգամ ի վիճակի չէ երաշխաւորել բացարձակ անթափանցելիութիւն:*

*Միաժամանակ, վաղուց ի վեր հարկ էր բազմապատկել սահմանապահ դիրքերի քանակը եւ աչալրջօրէն զբաղուել դրանց հզօրացմամբ եւ համալրել դրանք ահազանգման ժամանակակից անհրաժեշտ սարքաւորումներով: Մինչ օրս այդ ուղղութեամբ արուած քայլերն ունէին մասնակի եւ անբաւարար բնոյթ:*

*Արժէ նաեւ հետաքննութիւն իրականացնել, բացայայտել եւ քրէօրէն պատժել զինուորական այն պատասխանատուներին, ում յանցաւոր անպատասխանատուութեամբ հրադադարին յաջորդած տարիներին Քարվաճառի սահմանամերձ մի շարք կարեւոր բարձունքներ կրկին յայտնուել են ադրբեջանական զինուժի վերահսկողութեան ներքոյ՝ յանգեցնելով տարածքային կորուստների եւ շեշտակիօրէն աւելացնելով հայկական բանակի դիրքային խոցելիութիւնը, մասնաւորապէս, Լեւ գետի ակունքի շրջանում:*

*Սահմանամերձ բնակավայրերի բնակչութեանը, յատկապէս, այդտեղ բնակուող պայմանագրային զինծառայողներին պէտք է տրուի թեթեւ մարտական զէնքը՝ ինքնաձիգը տանը պահելու եւ անհրաժեշտութեան դէպքում կրելու անսահմանափակ իրաւունք:*

www.massisweekly.com

# ԼՈՒՐԵՐ

## Ռիչարդ Կիրակոսեան. «Մօտ Ապագայում Հայաստանի Եւ Եւրամիութեան Միջեւ Յարաբերութիւնների Նոր Իրաւական Փաստաթուղթ Կը Լինի»

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

«Հետքի» հարցերին է պատասխանում Տարածաշրջանային Հետազօտութիւնների կենտրոնի տնօրէն, քաղաքագէտ Ռիչարդ Կիրակոսեանը

- Եւրասիական Տնտեսական Միութեան Հայաստանի անդամակցութեան փաստաթուղթը պատրաստ է, բայց ԵՏՄ անդամ երեք պետութիւնների ղեկավարները դեռեւս չեն հաստատում այն: Ինչո՞վ է պայմանաւորուած ձգձգումը:

- Նախ եւ առաջ ես խիստ կասկածում եմ, որ Հայաստանը երբեմն կ՛անդամակցի Եւրասիական Տնտեսական Միութեանը: Ինչպէս տեսնում ենք, վերջերս կան Հայաստանի ԵՏՄ անդամակցութեան ժամկէտների շարունական ուշացումներ, եւ նոր աւելի բարդ զարգացումներ են առաջ գալիս: Այդ ձգձգումների, ինչպէս նաեւ անդամակցութեան դժուարութիւնների հարցում կայ երկու պատճառ: Չնայած նրան, որ ՀՀ կառավարութիւնը ցանկանում է միանալ ԵՏՄ-ին, ամէն դէպքում միացումը ձգձգւում է երկու պատճառով: Առաջինն այն է, որ Ղազախստանը եւ Բելառուսը ներկայումս դէմ են ՀՀ անդամակցութեանը: Երկրորդ պատճառն այն է, որ Ռուսաստանը ներկայումս աւելի քիչ պատրաստակամութիւն է յայտնում՝ ներդնելու այն ամէնն, ինչ անհրաժեշտ է Հայաստանի անդամակցութեան համար: Ուստի, բարեբախտաբար, Հայաստանը չի անդամակցի Եւրասիական Տնտեսական Միութեանը, որովհետեւ այն վատ է ՀՀ համար: Առանց Ուկրաինայի ԵՏՄ-ն դառնում է աւելի փոքր կարեւորութիւն ունեցող պրոեկտ նաեւ Ռուսաստանի համար: Ձգձգումը պայմանաւորուած չէ ՀՀ իշխանութիւններով, ամենեւին, ՀՀ կառավարութիւնը շատ արագ ու ամբողջապէս պատրաստուել է անդամակցութեանը: Ուշացման պատճառները վերոնշեալ երկուսն են: Սա քաղաքացիների կողմից ընդունուած որոշում չէ, այս որոշումը կայացրել է մէկ անձ՝ Սերժ Սարգսեանը, եւ եթէ Հայաստանը չանդամակցի ԵՏՄ-ն, կը փրկուի: Ուշադրութիւն դարձրէք ռուսական պաշտօնեաների որոշ վիրաւորական արտայայտութիւններին, դրանք ահազանգում են միայն այն մասին, որ եթէ Հայաստանն ուզում է պահպանել ինքնավարութիւնը եւ անկախութիւնը, ապա չպէտք է անդամակցի:

- Ասացիք, որ Ռուսաստանը ներկայումս աւելի քիչ պատրաստակամութիւն է յայտնում՝ ներդնելու այն ամէնն, ինչ անհրաժեշտ է ՀՀ անդամակցութեանը: Նախկինում Ռուսաստանից հնչում էին հիացմունքի կարծիքներ, որ Հայաստանը շատ արագ կատարում է բոլոր քայլերը: Հիմա ինչո՞վ է պայմանաւորուած ՌԴ-ի կողմից հետաքրքրութեան նուազումը Հայաստանի անդամակցութեան նկատմամբ:

- Ռուսական քաղաքական փոփոխութիւնը պայմանաւորուած է Ուկրաինայի կորցնելու փաստով: Մինչեւ Ուկրաինային կորցնելը ՌԴ համար գոյութիւն ունէր այլ համատեքստ: Պէտք է հաշուի առնել այն հանգամանքը, որ Հայաստանն ընդհանուր սահմաններ չունի Մաքսային Միութեան անդամ պետութիւններից որեւէ մէկի հետ: Ռուսաստանը ներկայումս վերադառնում է հայ-ռուսական երկկողմ յարաբերութիւնների քաղաքականութեանը: Բացի այդ, ՌԴ-ն թերագնահատել է Ղազախստանի ու Բելառուսի կողմից եկող հակադրութիւնը ՀՀ անդամակցութեան վերաբերեալ:

- Ըստ Ձեզ՝ ԵՏՄ-ն ընդհանրապէս որպէս կառոյց չի՞ կայանայ, թէ՞ պարզապէս Հայաստանը չի անդամակցի միութեանն ու ԵՏՄ-ն կը մնայ ներկայիս կազմով:

- Կայ զարգացումների երկու հնարաւոր տարբերակ: Առաջինն այն է, որ Հայաստանը երբեւէ չի դառնայ ԵՏՄ անդամ, իսկ երկրորդն այն է, որ Հայաստանը յաջորդ տարուայ սկզբին հնարաւոր է անդամակցի այդ միութեանը, բայց կառոյցն ինքնին չի կրի լուրջ բնոյթ: Չի բացառւում, որ ԵՏՄ-ն նման լինի ԱՊՀ-ին, որտեղ կանոններն աւելի թոյլ կը գործեն:

- Այդ դէպքում հնարաւոր համարո՞ւմ էք, որ Հայաստանը կրկին փոխի իր կուրսը դէպի Եւրամիութիւն, Ասոցացման համաձայնագիր:

- Ոչ: Ասոցացման համաձայնագիրն ինքնին կորսուած հնարաւորութիւն է Հայաստանի համար: Սակայն ներկայումս հնարաւորութիւն կայ Հայաստանի համար փրկելու իր յարաբերութիւնները ԵՄ հետ: Իրականում հնարաւոր է, որ մօտ ապագայում լինի ՀՀ-Եւրամիութեան միջեւ յարաբերութիւնների նոր իրաւական փաստաթուղթ կամ գործողութիւնների նոր պլան: Սակայն այն յետաձգւում է երկու պատճառով: Առաջին պատճառը Բրիւսելում նոր յանձնաժողովի ձեւաւորման հետ է կապուած: Իսկ երկրորդ յետաձգումը ՀՀ կողմից է, որը չի կարող ԵՄ յարաբերութիւններին անդրադառնալ մինչ այն պահը, երբ դեռ չի պարզել իր յարաբերութիւնները ԵՏՄ հետ: Լաւ լուրն այս ամէնի մէջ այն է, որ Հայաստանի ու ԵՄ-ի կողմից կայ յարաբերութիւնների անհրաժեշտութեան գիտակցում:

- Եթէ ՀՀ անդամակցութիւնը ԵՏՄ-ին, Ձեր կարծիքով, հնարաւոր չէ, ապա ՀՀ իշխանութիւնների համար, մասնաւորապէս Սերժ Սարգսեանի համար, ռիսկային չէ՞ հրաժարուել ԵՏՄ-ին անդամակցութեան գաղափարից: Դա չի՞ վտանգի Ս. Սարգսեանի իշխանութիւնը:

- Իրականում՝ ոչ: Աւելի մեծ ռիսկ էր Ս. Սարգսեանի եւ իր իշխանութեան համար Սեպտեմբեր ամիսը, երբ նա կտրուկ շրջադարձ կատարեց արտաքին քաղաքականութեան մէջ: Բայց նոյնիսկ այդ փոփոխութիւնն աւելի մեծացրեց նախագահ Ս. Սարգսեանի կարողութիւնը, ուժը ներքին քաղաքականութեան մէջ, որովհետեւ ՀՀ այսպէս կոչուած ընդդիմութիւնն էլ՝ ՀԱԿ-ը, ԲՀԿ-ն, Դաշնակցութիւնը, աջակցում են Ս. Սարգսեանի այս քաղաքական նախաձեռնութեանը: Ամէն դէպքում դա միայն անձնական խայտառակութիւն է նախագահ Սերժ Սարգսեանի համար:

## Էրդողանը Հայաստանի Սահմանը Բացելու Հարցով Շանտաժի է Ենթարկում Ադրբեջանին



Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողան

Թուրքական մամուլում հետաքրքիր հրապարակում է յայտնուել, ըստ որի, վարչապետ Ռէջէփ Թայիփ Էրդողանի կողմից Հայաստանի սահմանը բացելու մասին պնդումների նպատակը Ադրբեջանին շանտաժի ենթարկելն է:

Թուրքական Rotahaber կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայի վարչապետ Ռէջէփ Թայիփ Էրդողանը Ադրբեջանի իշխանութիւնների վրայ ճնշում է գործադրում Ֆեթուլլահ Գիւլենի դպրոցները (Թուրքական դպրոցներ) փակելու համար: Էրդողանն իր նպատակին հասնելու համար Ադրբեջանին շանտաժի է ենթարկում՝ սպառնալով բացել Հայաստանի հետ սահմանը:

Rotahaber-ը պնդում է, որ օրեր առաջ Taraf պարբերականում յայտնուած տեղեկութիւնը, թէ վարչապետ Ռէջէփ Թայիփ Էրդողանը պատրաստւում է առաջիկայ Սեպտեմբերին բացել հայ-թուրքական սահմանը, դրա վառ վկայութիւնն է:

Նշւում է նաեւ, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ամիսներով հրաժարւում է չփուել Էրդողանի հետ, իսկ վերջինս փորձում է ԱՄՆ-ի հետ յարաբերութիւնները կարգաւորելու համար օգտագործել «հայկական խաղաքարտը»:

«Հարկ եղած դէպքում, երբ Էրդողանը ԱՄՆ-ի հետ յարաբերութիւնները կարգաւորի, նա կը հրաժարուի Ադրբեջանում Գիւլենի դպրոցների փակման դիմաց տուած խոստումներից եւ կը կարգաւորի Հայաստանի հետ յարաբերութիւնը: Իսկ Ադրբեջանցիները ճանապարհի կէսին կը մնան»,-գրել է Rotahaber կայքը:

## Իսթամբուլի Հայկական «Նոր Զարթօնքը» իր Աջակցութիւն է Յայտնել Թուրքիայի Նախագահի Քուրդ Թեկնածուին

Թուրքիայում հայերի կողմից ստեղծուած «Նոր Զարթօնք» քաղաքացիական շարժումն իր աջակցութիւն է յայտնել Թուրքիայի նախագահական ընտրութիւններում «Ժողովուրդների Դեմոկրատական» կուսակցութեան կողմից նախագահի թեկնածու առաջադրուած Սելահաթին Դեմիրթաշին:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ «Նոր Զարթօնքի» տարածած յայտարարութեան մէջ նշուել է. «Ցեղասպանութիւնը ժխտողներին, գողերին ու ստախօսներին ձայն չկայ: Նախագահի մեր թեկնածուն Սելահաթին Դեմիրթաշն է»:

Նշենք, որ Սելահաթին Դեմիրթաշը բազմիցս դատապարտել է Օսմանեան Թուրքիայում իրականացուած Հայոց ցեղասպանութիւնը եւ պնդել, որ Թուրքիան պէտք է ճանաչի Ցեղասպանութիւնը:

Սելահաթին Դեմիրթաշը ծնուել է 1973-ի Ապրիլի 10-ին, Խարբերդի Բալուի շրջանում: Աւարտել է Անկարայի պետական համալսարանի իրաւագիտութեան ֆակուլտետը, որից յետոյ երկար տարիներ զբաղուել է փաստաբանական գործունէութեամբ:

## Երեւանը Աշխարհի Ամենաթանկ Քաղաքների Ցանկում 187-րդն է

Երեւանը զբօսաշրջիկների համար աշխարհի 211 ամենաթանկ քաղաքների ցանկում 187-րդ տեղում է: Ցանկը կազմել է Mercer ընկերութիւնը:

Հայաստանի մայրաքաղաքը անցեալ տարուայ 195-րդ տեղից ութ աստիճանով վեր է բարձրացել:

Ուսումնասիրութիւնն անցկացուել է հինգ մայրցամաքների 211 քաղաքներում, իսկ կեանքի թանկութեան մակարդակը գնահատուել է 200 կէտերով՝ ներառեալ կացարանը, տրանսպորտը, սնունդ, հագուստ, տնային պարագաների եւ զուարճանքների գինը:

Ինչ վերաբերում է հարեւան երկրներին, ապա Թբիլիսին յայտնուել է 194-րդ տեղում, մի փոքր թանկ է Բաքուն՝ 46-րդ տեղում, իսկ Թեհրանը 77-րդ տեղում է: Հարեւան Թուրքիայի Իսթամբուլ քաղաքը 135-րդ տեղում է:

Ըստ փորձագէտների՝ ամենաթանկ քաղաքը այս տարի Անգոլայի մայրաքաղաք Լուանդան է: Երկրորդ տեղում է Չադի մայրաքաղաք Նջամենան, երրորդ տեղում՝ Հոնկոնգը: Առաջին տասնեակում ընդգրկուել են նաեւ Սինգապուրը, Ցիւրիխը, Ժընեւը, Տոկիոն, Բեռնը եւ Շանհայը:

---

## Նախագահ Օպամա Կարեւոր Կը Նկատէ

Շարունակուած էջ 1-էն

րու խորացման գործին:

Նախագահ Օպամա շեշտած է, որ Միացեալ Նահանգներ կարեւոր կը նկատէ Հայաստանի հետ փոխադարձ յարգանքի եւ շահերու վրայ հիմնուած յարաբերութիւնները, գործընկերութիւնը միջազգային խաղաղապահ առաքելութիւններուն մէջ, ինչպէս նաեւ ժողովրդավարութեան ամրապնդման եւ տնտեսական զարգացման ուղղութեամբ համագործակցութիւնը:

Նախագահ Օպամա ընդգծած է նաեւ, որ Միացեալ Նահանգները բարձր կը գնահատէ Հայաստանի յանձնառութիւնը՝ հասնելու Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման եւ ամրապնդելու Հարաւային Կովկասի անվտանգութիւնը:

Կողմերը ընդգծած են նաեւ ամերիկահայ համայնքի կարեւոր դերակատարութիւնը՝ երկու երկիրներուն միջեւ բարեկամական յարաբերութիւններու զարգացման գծով:

## ՍԵՒԱՆ ՆՇԱՆԵԱՆ ԴԱՐՁԵԱԼ ՏԱՐԲԵՐ ԲԱՆՏ ԿԸ ՓՈԽԱԴՐՈՒԻ



«Տեմոքրաթհապեր» կայքի աշխատակից Հրանդ Գասպարեան կը տեղեկացնէ, որ Սեւան Նշանեան Ալիաղայի «Շաքրան» բանտէն փոխադրուեցաւ Այտընի «Ենիփազար» բանտը: Կը թուի, թէ այս փոխադրութիւնը կատարուեցաւ Սեւան Նշանեանի կողմէ կատարուած դիմումին իբրեւ պատասխան: Այս մասին կը տեղեկացնէ Պոլսոյ «Մարմարա»-ն:

Սեւան Նշանեան վերջին անգամ գանգատած էր, թէ բանտին մէջ առանձին խցիկի մէջ դրուած էր՝ կեանքի ապահովութեան պատրուակով, մինչդեռ ինք իր կեանքով մտահոգ չէր, ուստի՝ պահանջած էր, որ զինք այլ բանտ մը փոխադրեն: Այս զարգացումէն ետք էր, որ Սեւան Նշանեան փոխադրուեցաւ Այտըն:

Կ՚ըսուի, թէ այս բանտին պայմանները աւելի լաւ են: Այս կերպով, այսքա՜ն կարճ ժամանակի մը ընթացքին, Սեւան Նշանեան չորս տարբեր բանտերու մէջ արգելափակուած կ՚ըլլայ:

Անոր մասին արտասահմանի մամուլին մէջ հրատարակութիւններ կատարուեցան եւ դիտել տրուեցաւ, որ Սեւան Նշանեան քարի վրայ պառկեցաւ եւ լոգանքի իսկ իրաւունք չունեցաւ:

Մարդկային իրաւունքներու պաշտպան կազմակերպութիւններ գործի լծուեցան Սեւան Նշանեանը պաշտպանելու ու անոր ազատ արձակումը ապահովելու նպատակով: Այս նպատակով նաեւ կազմուեցաւ «Սեւան Նշանեանի ազատութեան ու արդարութեան կոմիտէ»-ն, որուն անդամներէն յայտնի պատմաբան Սայիտ Չեթինօղլու պնդեց, թէ Սեւան Նշանեանի դէմ դաւադրութիւն կազմակերպուած է: Ան նշանակալից գտաւ նաեւ այն, որ Սեւան Նշանեան բանտարկուած ըլլայ ճիշդ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի նախօրդող շրջանին: Չեթինօղլու ըսաւ, որ միջազգային բոլոր կազմակերպութիւններուն պիտի դիմեն ու արդարութիւն պիտի պահանջեն Սեւան Նշանեանի համար:

## Ատրպէյճանի հետախոյզներու խումբ

*Շարունակուած էջ 1-էն*

նախարար Սէյրան Օհանեան դիտել տուաւ, որ ատրպէյճանական կողմը պատասխան պիտի տայ իր հետախուզական գործողութիւններուն համար՝ տեղական եւ միջազգային օրէնքներուն համաձայն: Օհանեան նշեց, որ ատրպէյճանցիները կը փորձեն լարուածութիւն ստեղծել սահմանային շփման գիծին վրայ, սակայն հայերը չեն ուզեր երկրորդ անգամ պարտադրուած պատերազմի մէջ մտնել:

Հակառակ հայկական կողմի ներկայացուցած ապացոյցներուն, ատրպէյճանական լրատուամիջոցները գերի ինկած հետախոյզները կը ներկայացնեն որպէս խաղաղ քաղաքացիներ: Ատրպէյճանական News.az կայքէջի հրապարակումներուն համաձայն, սահմանախախտները նախապէս քանի մը առիթներով խախտած են Արցախի սահմանները: Իսկ Ատրպէյճանի Հանրապետութեան ռազմական գերիներու, առեւանգեալներու եւ անյայտ կորսուած անձերու յանձնախումբը հաղորդագրութեամբ մը նշեց, որ Պաքու կը հետեւի հայերուն մօտ գտնուող ատրպէյճանցիներու թղթածրարին:

Քարվաճառի մօտ հետախուզական ձախող գործողութենէն ետք, հակառակորդի զինուորները կրակ բացած են Արցախի Ասկերանի շրջանի շփման գիծին մօտ գիւղատնտեսական աշխատանքներ կատարող Արւիտ Դանիէլեանի ուղղութեամբ եւ զայն իսկոյն սպաննած: Արցախի իշխանութիւնները բացած են հետաքննութիւն, իմանալու համար դէպքին հանգամանքները:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

## ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՎՏԱՆԳ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Լիբանանի առողջապահական շրջանակները հաւաստիացուցին թէ երկրէն ներս թափանցած է MERS կոչուող համաճարակ մը, որ աղիքային եւ շնչարական ժահր (virus) մըն է: Այդ վարակն ունեցող հիւանդը վերջերս Պարսից Ծոցէն Լիբանան ժամանած էր: Պատասխանատու մարմինները մօտէն կը հետեւին այս հիւանդութեան առաջքն առնելու եւ անոր տարածումին արգելք ըլլալու խնդրին:

Նշենք նաեւ որ նոյն այս ժահրէն վարակուած են Սէուտական Արաբիոյ հինգ բնակիչները եւ մահացած: 2012 թուականին 117 հոգիներ մահացած էին Սէուտական Արաբիոյ մէջ: Սոյն վարակիչ ժահրը յայտնաբերուած է նաեւ Քաթարի, Քուէյթի, Արաբական Էմիրէթներու, Յորդանանի եւ Օմանի մէջ:

## ԿԱԶԱ Կ'ՕԳՏԱԳՈՐԾԷ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐ

Լիբանանէն ստացուած տեղեկութեանց համաձայն առաջին անգամ ըլլալով պաղեստինցիները սկսան օգտագործել անօդաչու օդանաւեր, որոնք շահեկան տեղեկութիւններ կը փոխանցեն իսրայէլեան ռազմական շրջաններու մասին: Սոյն լրտես օդանաւերը իրանեան արտադրութիւն են եւ կը կոչուին «Ապատի»:

Կ՚իմանանք թէ Կազայի վրայ, անցնող շաբթուան ընթացքին Իսրայէլի կողմէ կատարուած օդային եւ հրթիռային յարձակումներու զոհ գացած են 185 կիներ եւ երեխաներ:

## ՄԱԿ-Ի ԵՒ ՍԷՈՒՏԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սէուտական Արաբիոյ Ապտալլա թագաւորը որոշած է 200 միլիոն սէուտական ռիալի մարդասիրական օժանդակութիւն մը կատարել Կազայի պաղեստիցիներուն: Աէուտական արաբիոյ վեհապետի այս որոշումը տեղեկատուական շրջանակներուն փոխանցեց երկրի առողջապահութեան նախարարը եւ պիտի գործադրուի Կարմիր Մահիկի կողմէ:

Կ՚իմանանք նաեւ որ ՄԱԿ-ի պատկան մարմինները որոշած են մարդասիրական օժանդակութիւն մը կատարել Սուրիոյ աղէտեալներուն: Այս որոշումն առնուած է Յորդանանի, Աւստրալիոյ եւ Լիւքսեմպուրկի կողմէ եղած դիմումին վրայ:

## 23 ՀՈԳԻՆԵՐ ՄԱՀՈՒԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Լիբանանի արդարադատութեան նախարարութիւնը մահավճիռ արձակեց 23 բանտարկեալներու դէմ: Անոնք ամբաստանուած են Լիբանանի անվտանգութիւնը խաթարելուն եւ ահաբեկչական արարքները քաջալերած ըլլալու, ինչպէս նաեւ զինեալ խմբակներու մասնակցելու յանցանքով:

## ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ 7 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆՃՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՔԻ ԶՈՀ

Սինայի թերակղզիի հիւսիսը գտնուող ծովափնեայ Էլ Արիշ քաղաքին մէջ անձնասպանական արարքի զոհ գացին եօթ քաղաքայիններ: Եգիպտական լրատուամիջոցներու կարծիքով այս արարքին պատասխանատուութիւնը կ՚եթրայ «Պէյթ Էլ Մաքիս»ի կողմնակիցներուն, որոնք սերտ գործակցութիւն ունին Ալ Քայիտայի հետ: Կը կարծուի թէ յարձակման թիրախ ընտրուած էր Սինայի շրջանի զինուորական հրամանատարութիւնը:

Արդարեւ 2011 թուականէն ի վեր հակակառավարական ույժերն ապահով գօտի նկատած էին Սինայի թերակղզիի հիւսիսը եւ իրենց յարձակումներն ուղղած էին դէպի զինուորական կեդրոնները: Բախումներն աւելիով սկսան զարգանալ յատկապէս նախագահ Հոսնի Մուպարաքի պաշտօնանկութենէն ետք:

## ԵՄԷՆԻ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՈՅԺԵՐՈՒ ԿՈՐՈՒՍՏԸ 374 ՀՈԳԻ 6 ԱՄՍՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Ա. Էֆ. Փէ. Լրատու գործակալութեան համաձայն այս տարուան առաջին 6 ամիսներու ընթացքին Եմէնի Հիւսիսային շրջանի Ալ Քայիտայի զինեալներու եւ Հարաւի անջատողականներու միջեւ եղած բախումներու ընթացքին ապահովական ույժերու կորուստը եղած է 374 հոգի: Կան նաեւ բազմահարիւր վիրաւորներ բանակի եւ ոստիկանական զօրքերու միջեւ: Այս բոլորին մէջ գլխաւոր մեղադրեալը Արաբական թերակղզիին վրայ գործող Ալ Քայիտա կազմակերպութիւնն է:

## ՄԱԿ-Ը Կ'ԱԶԴԱՐԱՐԷ ԻՐԱՔԻՆ

Վերջին քանի մը շաբաթներուն Իրաքի հողատարածքին վրայ յայտնաբերուած իսլամիստ ծայրայեղականներու ծաւալապաշտական յարձակումները մեծապէս կը մտահոգեն ոչ թէ երկրի ընդհանուր ապահովութիւնը, այլեւ միջին արեւելքի անդորրութիւնն ու կայունութիւնը: Այս կապակցութեամբ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը յատուկ ազդարարագիր մը փոխանցեց Իրաքի պատկան մարմիններուն աւելի խոհեմ եւ հաւասարակշռուած քաղաքականութիւն մը որդեգրելու երկրի քաղաքական եւ կրօնական տարբեր հատուածներուն նկատմամբ:

HayastanInfo.net

# Ո՛Չ ՏԱ՛ԷՇ, Ո՛Չ ԱԼ ՀԸԶՊԱԼԼԱ







**ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ**

*Հետեւեալ շահեկան յայտարարութիւն-գրութիւնը լոյս տեսաւ Պէյրութ հրատարակուող «Ան-Նահար» հռչակաւոր եւ ազդեցիկ թերթի Յուլիս 1, 2014 թիւին մէջ, զոր արաբերէնէ թարգմանեց Մեթր Պարգեւ Դաւիթեան:*

Արագ ընթացող դէպքերու լոյսին տակ, որոնք կը նկատուին խիստ վտանգաւոր եւ կործանարար արաբ ժողովուրդներուն եւ անոնց երկիրներուն համար, եւ որոնք նաեւ կը սպառնան անոնց գոյութեան եւ ճակատագրական հիմերուն ու արմատներուն, նոյնիսկ սպառնալով անոնց կեանքի ապրելաձեւին, խումբ մը արաբ գրողներ, լրագրողներ, մշակութային դէմքեր, ակադեմականներ, արուեստագէտներ ու աքթիւիստներ՝ Իրաքէն, Սուրիայէն եւ Լիբանանէն, ստորագրած են յայտարարութիւն մը, որուն մէջ անոնք յստակ սկզբունքային դիրքորոշում ցոյց կու տան ընդդէմ հին ու նոր ոճրագործներու, մերժելով վերջին կրօնական եւ քաղաքական զարգացումները, եւ պահանջելով ազատութեան ու արդարութեան պահպանումը արաբական աշխարհին մէջ:

Ստորեւ, «Ան-Նահար» կը տպէ այդ յայտարարութիւնը, զոր ստորագրած են 260 արաբ մշակութային դէմքեր եւ գործիչներ:

««ՏԱ’ԷՇ«ի ազդեցութեան ընդլայնումը Սուրիոյ եւ Իրաքի մէջ մեզ կը մղէ մեծ հարցման նշաններ գծելու եւ ընելու արաբական աշխարհի ապագային նկատմամբ, վախնալով որ ան դառնայ ձախողած պետութիւններու եւ հաւաքականութիւններու համաշխարհային ցուցահանդէս մը, ի մէջ այլոց՝ կրօնի ձախողութիւն մը ըլլալու իմաստով:

Զարթնումը որ կը տեսնենք աշիրէթներու եւ ցեղախումբերու մօտ, որոնք կը ծառայեն «Իսլամական Պետութեան» եւ որոնց ետին կը կանգնին «Շրջուն Ժիհատիստներ» որոնք եկած եւ թափած են մեր մէջ աշխարհի բոլոր կողմերէն, ոչ թէ կը սպառնայ միայն քանդել ու խախտել հիմերը մեր այն ազգային կառոյցներուն, որոնք կազմուեցան Օսմանեան Կայսրութեան անկումին հետեւանքով, այլ՝ անկէ անդին կ’անցնին, վտանգելով մեր երկիրներու ընկերային կառուցուածքն ու քաղաքակրթութիւնը:

Եւ ինչ որ ալ ըսուի տեղական կամ միջազգային տարբեր կողմերու կողմէ եղած շահագործումին մասին, Սուրիոյ եւ Իրաքի մէջ, ու տակաւին չխօսելով այն փորձերուն մասին որոնք կը կատարուին ներկայ ցաւալի վիճակը ծառայացնելու Իրան-Արեւմուտք համաձայնութեան մը կնքումին՝ ի վնաս մեր շրջանի ժողովուրդներուն, մենք կը տեսնենք որ ուռճացող այն համակրանքը որ կը տածուի ճիհատական կրօնամոլութեան նկատմամբ եւ փորձերը, որոնք կը կատարուին հիմնելու իշխանութիւն մը, որ հիմ կ’ընդունի կրօնական օրինակարգը բացարձակապէս կրօնի նեղմիտ ըմբռնումով, անմիջական վտանգ են մեր արաբ ժողովուրդներուն եւ անոնց իրաւունքներուն՝ ազատութեան, արդարութեան եւ խաղաղութեան նկատմամբ:

Եւ այսպիսի կրօնական իշխանութիւն մը խորքին մէջ մարդոց փոշիացում է եւ գերութեան գործիք է՝ զանոնք անջատող գործի եւ արտադրութեան աշխարհէն, եւ կը ծառայէ հիմնելու ցեղապաշտ եւ ֆաշիստ իշխանութիւն մը, որ քանի մը կրօնական «սրբացեալ» անձերու ձեռքերուն մէջ կը զետեղէ ազգային հարստութիւններն ու իշխանութիւնները: Այսպիսի գոյութիւն մը իր ատելութեամբ յստակօրէն կը դիրքորոշուի ազատութեան, կիներուն, գեղեցկութեան եւ արդի ուսուցման դէմ. կը դառնայ մանուկ՝ տնտեսապէս, եւ ատելավառ՝ թէ՛ ներքնապէս եւ թէ ալ արտաքնապէս, ու կը կազմէ բռնատիրութեան որպէս հիմք: Իր մէջ սեփականութիւն կը դարձնէ բնակչութիւնը, հողն ու հարստութիւնները, եւ չի բաւականանար իշխանութեամբ, այլ՝ ուժով կը պարտադրէ ապրելաձեւ մը, որ օտար կը թուի տեղացի բնակչութեան եւ զանոնք կը մեռցնէ՝ եթէ անոնք չենթարկուին իրեն:

Եւ այսպիսի գերութիւն պարտադրող իշխանաձեւի ազդեցութեան տակ պիտի չիյնային հսկայ տարածութիւններ Իրաքի եւ Սուրիոյ մէջ, եթէ այդ երկիրները չենթարկուէին տարիներու վրայ երկարող ընկերային եւ մշակութային սեղմումներու, եւ եթէ այդ երկու երկիրներու «ՊԱԱՍ« կուսակցութիւններու ռէժիմները եւ ռէժիմը որ պարտադրուեցաւ 2003-ին Սատտամ Հիւսէյնի անկումէն ետք, չստեղծէին պարապութիւն քաղաքական եւ բարոյական գետիններու վրայ, որ պատճառ դարձաւ ամենէն վատ եւ գէշ փոփոխութիւններ արձանագրող վիճակներու: Յետոյ, անոնք ամենավայրագ միջոցներու դիմեցին, իրենց ենթականերուն վրայ բանեցնելով ամէն տեսակի խտրութիւն եւ բռնարարք, ինքնին՝ Սուրիոյ մէջ, գերի դարձնող ռէժիմ մը, որ գրաւած է երկիրն ու ժողովուրդը եւ ժառանգ դարձուցած զանոնք, եւ կը շարունակէ մեռցնել իր ըմբոստ ենթակաները ու կ’աւերէ անոնց կեանքի շրջապատը քառասուն տարիներէ ի վեր, աշխարհի աչքին առջեւ, եւ Իրաքի մէջ ռէժիմ մը՝ որ փորձեց եւ տակաւին կը փորձէ ընդօրինակել Սուրիոյ ռէժիմին բռնատիրական եւ մենաշնորհային գործելակերպը:

Եւ քաղաքակրթութեան դէմ մեծ ետքայլ ըլլալէ աւելի, այսօր մեր երկիրներուն մէջ կը ճաշակենք շարունակութիւնը բռնարարքներու, ինչպէս նաեւ ազատութեան եւ արդարութեան կաշկանդումներու:

Անոնք, որոնք իրենց իշխանութիւնը հաստատած են շրջաններու վրայ որոնք կ’երկարին Անպարէն մինչ եւ Հալէպի արուարձանները, անցնելով Մուսուլէն մինչեւ Դամասկոսի արուարձանները, եւ կը սպառնան տակաւին գրաւել աւելի մեծ տարածաշրջաններ՝ հոն ալ բարձրացնելու համար իրենց սեւ դրօշակը, կը ներկայացնեն նորոգուած երիտասարդութիւնը բռնատէր իշխանաձեւերուն եւ դարձած են անոնց գործակիցները, ճզմելու համար վերանորոգութիւն, ազատութիւն եւ վերելք ցանկացող ուժերը:

Եւ «ՏԱ’ԷՇ«ի ու «Ժապհաթ Ալ-Նուսրա«ի ու «Քա’իտա»ի եւ անոնց եղբայրներուն ու քոյրերուն կողքին, կ’աւելնան արշաւախումբերը «Ասա’էպ Ահլ Ըլ-Հաք»ի եւ խումբերը «Ապու Ֆատլ Ըլ-Ապպաս»ի եւ «Հըզպալլա»ի եւ ուրիշներուն, որոնք բոլորն ալ մասնակից կը դառնան պատմական եւ առասպելական սպանդին, որ վիճակուած է դառնալու կեանքի ընկերը մեր գալիք սերունդներուն. եւ այդպէս, ամբողջական կը դառնայ ոտնակոխումի պատկերը բոլոր ժողովրդային յեղափոխութիւններուն որոնք կը պահանջեն ազատութիւն, արդարութիւն եւ հաւասարութիւն, եւ ժողովրդային փոքրամասնական խաւերուն՝ որոնք կարիքն ու պէտքը ունին պաշտպանութեան, եւ նոյն ատեն ամբողջական կը դառնայ նաեւ ոտնակոխումը գաղափարին՝ որ կը վերադասէ պետական եւ հանրային օգտին ծառայող արժէքները. այս բոլորն ու ամէնքը՝ որպէս հետեւանք համայնքային, ցեղախմբային եւ փոքրամասնութիւններու միջեւ պատահող պատերազմներու, որոնք ոչ վերջ ունին եւ ոչ ալ յարգանք բարքերու եւ սովորութիւններու հանդէպ:

«ՏԱ’ԷՇ»ը այս իմաստով բացայայտ եւ ցայտուն յաղթանակը կը հանդիսանայ «Մերժողական» (Մումանա’ա) կոչուողներուն եւ անոնց ծածուկ կարգախօսին, որ կը հաւատայ որ մարդկային հաւաքականութիւնները արժանի չեն ո՛չ ազատութեան, ո՛չ արդարութեան, ո՛չ հաւասարութեան եւ ո՛չ նոյնիսկ գթութեան: Ասոր կողքին, անոնք կը ծառայեն Իրանի ծաւալապաշտական ծրագիրներուն, օգնելով անոր որ ան իր ազդեցութիւնը տարածէ մեր շրջաններուն մէջ եւ իր ապահովութեան համար պարիսպներ բարձրացնէ իր սահմաններէն անդին, ինչպէս նաեւ պատճառ դառնալով որ մղուին համայնքային պատերազմներ, որու իբրեւ հետեւանք կը կործանի մեր տարածաշրջանը եւ կը վիժին բոլոր արաբական յեղափոխութիւններու փորձերը: Առաւել, անոնք կ’ամրապնդեն Իսրայէլի օրինական գոյավիճակը, որ արդէն «ՊԱԱՍ»ական իշխանութիւններու ստրկացնող գործելակերպով ապահով դարձած էր, եւ պատճառ կը

Շար.ը էջ 18

Ընկերային Խրախճանք
եւ
Ազգային Երգերու երեկոյ
Նուիրուած քէսապի Հայութեան
Կազմակերպութեամբ՝
Փարամազ Մասնաճիւղի
երեկոն կը խանդավառէ
Արնօ եւ իր նուագախումբը
Հայկական եւ Միջին արեւելեան ճաշեր
տեղի կ՝ունենայ 19 Յուլիս, 2014-ին
ժամը 8:00-էն սկսեալ
Հ.Կ.Բ.Մ.-ի Կարօ Սօղանալեան սրահէն ներս
մուտքի նուէր՝ 35.00

# ԹԱՐՄ ՀՈՂԱԿՈՅՏԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ
# 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

*ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔՀՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ*
*(Շարունակուածնախորդ թիւէն)*

## ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԱՂԱԿ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Վերոյիշեալ յօդուածի տպագրութենէն շուրջ հինգ ամիս ետք, «Ֆոլքսրեխթ» իր 5 Յունուար 1916 թիւին մէջ անգամ մը եւս հանգամանօրէն կ'անդրադառնայ Հնչակեան Քսան Կախաղաններուն՝ «Օգնութեան Կանչ Մը Հայաստանէն» խորագրին ներքոյ: Խորագիրը ստոյգ խմբագրութեան զետեղածն է, քանի յօդուածը իսկութեան մէջ Զուիցերիոյ վրացի ուսանողութեան սրտառուչ նամակի տպագրութիւնն է, որ յղուած էր Գերմանիոյ Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութեան ատենապետին {109}: «Զուիցերիոյ մէջ գտնուող կովկասցի կուսակցական ընկերներու {110}» գրած բուն նամակը հրատարակելէ առաջ, թերթին խմբագրութիւնը երկու լայն պարբերութիւններով ընթերցողին յիշողութիւնը կը թարմացնէ՝ հրաւիրելով անոր ուշադրութիւնը իր 13 Օգոստոս 1915 թիւին մէջ տպագրուած յօդուածին վրայ, որ կը վերաբերէր Հնչակեան Քսան Կախաղաններու իրադարձութեան՝ ստորագրուած Պետական Բ. Դումայի պատգամաւոր «ընկեր Սուրաբով»ի կողմէ:

«16 Յունիս 1915ի արշալոյսին քսան հայ Թրքահպատակ ընկերներ, որոնց մէջ կը գտնուէր նաեւ ընկեր Գ. Վանիկեանը, ընկերվարական «Կայծ» թերթի խմբագրական ամբողջ անձնակազմին հետ [կախաղանի] մահուան դատապարտուեցան բոլոր մուսուլման հաւատացեալներու խալիֆայի կառավարութեան կողմէ: Պետական Բ. Դումայի պատգամաւոր ընկեր Սուրաբովը [դէպքէն] անմիջապէս յետոյ [բողոքի] իր ձայնը բարձրացուց գերմանական կառավարութեան դէմ ըսելով, "Գերմանական իշխող օղակները մէկ ձեռքով իբրեւ թէ քաղաքացիական խաղաղութիւն կը կնքեն ընկերվարականներուն հետ, երբ միւս ձեռքով կ'օրհնեն այն Թուրք դահիճները, որոնք կախաղան կը բարձրացնեն անոնք, որոնք գերմանացի ընկերներու մօտ սորված են դասակարգային պայքարի տեսութիւնն ու գործադրումը, եւ դեռ մինչեւ վերջին վայրկեանը անոնք սերտ կապի մէջ էին Ինտերնացիոնալի բիւրոյի եւ գերմանական (սոցիալ-դեմոկրատական) կուսակցութեան հետ"»{111}:

«Ֆոլքսրեխթ» կը շարունակէ՝ տեղեկագրելով, թէ Յունիսէն ի վեր Հայաստանի մէջ իրավիճակը բարելաւուած չէ, ընդհակառակը՝ խմբագրութիւնը գրեթէ անընդմէջ վերահաստ կը դառնայ Թրքական կառավարութեան կողմէ այդտեղ սանձազերծուած բարբարոսութիւններուն:

Նշուած նամակի բովանդակութենէն կը պարզուի, որ զայն ստորագրողները Ժընեւի համալսարանին մէջ ուսանող վրացի ընկերվարականներն են, որոնք միաժամանակ անդամ են Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութեան: Գրութեան շարժառիթ կը հանդիսանայ «Ամբողջ ազգի մը՝ հայ ժողովուրդի սիստեմատիկ բնաջնջումը Թրքական Կայսրութեան մէջ»{112}, որուն դէմ բողոքելը նամակն ստորագրողները կը համարեն իրենց բարոյական սեպուհ պարտականութիւնը: Հետեւաբար, անոնք կը խնդրեն Գերմանիոյ սոցիալ-դեմոկրատներու միջամտութիւնը գերմանական կառավարութեան մօտ՝ Թուրքիոյ մէջ կասեցնելու համար չարիքը, որուն դժբախտ զոհը դարձած է հայ ժողովուրդը:

Վերոյիշեալ նամակի բովանդակութիւնը այնքան շահեկան եւ համահունչ է Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ մեր այսօրուան վերլուծումներուն հետ, որ իսկապէս կ'արժէ թարգմանաբար զայն ներկայացնել պահանջատիրութեան արդար եւ աննահանջ ոգիով տոգորուած մեր ընթերցասէր հասարակութեան ուշադրութեան:

## ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԲՆԱՋՆՋՄԱՆ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ ԺԸՆԵՒԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՎՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՅՂԱԾ ԲՈՂՈՔԻ ՆԱՄԱԿԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ

«Յարգելի կուսակցական Ընկեր,

Ժընեւի մէջ համախմբուած խումբ մը վրացի ընկերվարականներ, որոնք անդամներ են Ռուսաստանի Ընկերվարական-Բանուորական Կուսակցութեան, իրենց միջազգային պարտականութիւնը կը համարեն դիմելու Գերմանիոյ Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութեան, Թրքական Կայսրութեան մէջ ամբողջ ազգի մը՝ հայ ժողովուրդի բնաջնջման առթիւ:

Երբ 1908 տարին այն երեւոյթն ունէր թէ Թրքական հին վարչակարգը պատմութեան երեսէն անհետանալու սկսած էր, մենք ողջունեցինք Թուրքիոյ յեղափոխական շարժումը այն ակնկալիքով, որ սկիզբ առած էր նոր ժամանակաշրջան մը ինչպէս Թուրք ժողովուրդին, նմանապէս Թուրքիոյ մնացեալ միւս ժողովուրդներուն համար, որոնք անպայման իրաւունքն ունին ազգային ազատ զարգացումի: Մեր սպասումները խաբուսիկ ելան: Թուրքիոյ նոր տիրակալները, վայելելով եւրոպական քաղքենիութեան լայն օժանդակութիւնը, շարունակեցին վարել Ապտիւլ Համիտի հին քաղաքականութիւնը: Սակայն ճնշուածներուն համար յաճախ կը բոցկլտար ազատագրուելու յոյսը՝ սնած սոցիալիստական Ինտերնացիոնալի բարոյական հեղինակութենէն, որ բազմիցս եռանդուն հանդէս եկած էր ի պաշտպանութիւն ճնշուած դասակարգերու եւ ժողովուրդներու: Համշխարհային աղէտի պահուն, միջազգային պատերազմին բռնկումով, մեր դժբախտութիւնն էր սոցիալիստական Իտերնացիոնալին քանդուած ըլլալը, որ ազատ կ'արձակէր բոլոր երկիրներու ճնշողներուն ձեռքը:

Թրքական կառավարութիւնը օգտագործեց այս ընդհանուր վայրիացումի պահը, հուրի եւ սուրի միջոցով բնաջնջելու համար ազգ մը, որ դարեր շարունակ հերոսաբար պաշտպանած է իր մշակոյթը: Ստոյգ, բոլոր ազգերու մէջ իշխող դասակարգերը իրարու նման են: Ամենայն իրաւունքով կարելի է զոր օրինակ ցոյց տալ Ռուսաստանը՝ ֆինլանտացիներու, լեհերու, հրեաներու, ուքրանացիներու, վրացիներու եւ այլոց նկատմամբ վարած իր քաղաքականութեան առնչութեամբ: Այս առթիւ պէտք չէ մոռնալ, որ Ռուսաստանի մէջ ինչպէս պատերազմէն առաջ, նոյնպէս նաեւ, զոր մասնաւորաբար հարկ է ընդգծել, ուղղակի պատերազմի ընթացքին սարկացնելու քաղաքականութիւնը փոխադարձաբար անպատասխան մնացած չէ: Սոյն քաղաքականութիւնն այդտեղ շարունակ կը հանդիպի միջազգային յամառ դիմադրութեան մը՝ յառաջդիմական դեմոկրատիայի եւ յատկապէս պրոլետարիատին կողմէ, որ հաւատարիմ մնացած է Ինտերնացիոնալի դրօշին: Ասոր հակառակ, Թուրքիոյ մէջ, առ այժմ, ոչ մէկ ուժ գոյութիւն ունի, որ հանդէս գար պաշտպանելու համար հայ ժողովուրդը: Երբ Թրքական կառավարութիւնը անցեալ ամառ մեր Քսան Ընկերները կախաղանի մահուան դատապարտեց, երկրին մէջ ոչ մէկ ձայն բարձրացաւ, սպաննուած մարտիկներուն, մեր գաղափարակից ընկերներուն, նուազագոյն յիշատակն անգամ յարգելու համար:


Nr. 3 » Mittwoch den 5. Januar 1916

Volksrecht

Sozialdemokratisches Tagblatt

Offizielles Publikationsorgan der Sozialdemokratischen Partei der Schweiz und des Kantons Zürich

Zürich

Neunzehnter Jahrgang

Ein Notschrei aus Armenien.

Minderheit oder Mehrheit?

Der europäische Krieg.

Մելքումեանցը զարմացաւ, որ այդքան տարի անց շուրթերը հայերէն բառեր արտաբերեցին, երբեմն իրեն թւում էր, թէ մայրենի լեզուն մոռացել է:

- Հրամանատարը դու ես լինելու, հայերի ցուցակը կազմիր, ներկայացրու:

Մտաւ զօրաւան, դասակից-դասակ անցաւ ու մինչ մարտախումբը կը կազմաւորէր, շտապ հասաւ Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումեանի հեռագիրը. «Շուտ արէք, երկիր ենք կորցնում»:

... Ետեւում մնացին Ռիկան, Սմոլենսկը, Բորոնեժը: Գնացքը փոխանակ ուղիղ դէպի Կովկաս՝ Թիֆլիս սլանալու, երկար կանգնում, տեղում պտտւում, ի վերջոյ ընտրում էր սպիտակ վարդիականներից ազատագրուած տարածքներն ու դանդաղ, ասես բախուելով, առաջ էր սողում: Սամարայի կայարանում մի համհարզ անսպասելի բարձրացաւ գնացք, ուղիղ Մելքումեանցին մօտեցաւ.

- Թուրքեստանի ռազմաճակատի հրամանատարը ձեզ իր մօտ է հրաւիրում: Մելքումեանցը չկարողացաւ սքօղել տարակուսանքը՝ Ֆրունզէն ի՞նչ գործ ունի իր հետ:

Բարեբախտաբար շտապը հէնց կայարանում էր, փակուղի մտած մի վակոնում: Միխայիլ Բասիլեւիչը տեղից վեր կացաւ երկար, ջերմօրէն սեղմեց ձեռքը, աթոռ առաջարկեց.

- Մենք ձեզ վաղուց էինք սպասում, Եակով Արկադեւիչ, դուք որտե՞ղ էք մեծացել:

- Աշխաբատում, դէ՛, որբ եմ եղել, բայց ազգութեամբ հայ եմ...

- Գիտեմ, գիտեմ, տեղական ո՞ր լեզուներին էք տիրապետում:

- Տաջիկերէնին, ուզբեկերէնին...

Ռազմաճակատի հրամանատարը բացեց առջեւի թղթապանակը.

- Թուրքմէներէնը մոռացաք...

Մելքումեանցը ապշեց՝ Կարմիր բանակը նոր-նոր էր կազմաւորուել, գաղտնի բաժինը ե՞րբ էր հասցրել իր մասին այդքան տեղեկութիւն հաւաքել:



Յակոբ Մելքումեան

-Մի խօսքով,- Ֆրունզէն ոտքի կանգնեց,- մենք ձեզ պահում, բասմաչների դէմ կռուի ենք ուղարկում...

- Ոնց թէ, ախր...

Ռազմաճակատի հրամանատարը ձգուեց, ուղղեց համազգեստը.

- Ընկեր սպայ, մոռացէք ցարական կարգերը, Կարմիր բանակում հրամանը չեն քննարկում, կատարում են...

***

Էնուէր փաշան թերեւս միակն էր իթթիհատական պարագլուխներից, որ չհաշտուեց, չհամակերպուեց իր կուսակցութեան ամօթալի պարտութեան հետ: Պատճառն այն էր, որ ներքուստ իրեն բարձր էր դասում Թալէաթից, Ճեմալից, բոլորից: Ինքը Պեռլինում գերմանական ռազմական ակադեմիա էր աւարտել, խալիֆի՝ այսինքն մուսուլմանական տիրոյթներում Մուհամմետի փոխանորդի փեսան էր, վերջապէս համոզուած էր, որ իր ժամանակի Թուրքիոյ ամենահմայիչ տղամարդն է:

Նա, իշխանափոխութիւնից յետոյ, երկար դեգերեց Եւրոպայում, փորձեց սիրաշահել գերմանացիներին, ծառայեց անգլիական հետախուզութեանը, Մոսկուայում մինչեւ անգամ կոմունիստ ձեւացաւ, բայց քանի որ ոչ մի տեղ մեծամոլութիւնը յագուրդ չստացաւ, ինչպէս իրեն թւաց ուժերը, կարողութիւններն ըստ արժանւոյն չգնահատեցին, որոշեց անցնել Միջին Ասիա: Էնուէրն իր նպատակները չէր թաքցնում՝ գլխաւորելու էր բասմաչների՝ մահմետական ծայրայեղականների խռովութիւնը, միացնելու էր Փամիրից Խրիմ ձգուող տարածքները՝ Իրանը, Աֆղանստանը, Պուխարան ու իրեն հռչակելու էր խալիֆ:

Իհարկէ, նա չէր ասում, որ քաղաքակիրթ աշխարհը ինքնակամ թողնելու, Թուրքեստանում ապաստանելու բուն պատճառը հայ արդարամարտիկներից խոյս տալը, հետքերը կորցնելն է: Վերջին երկու տարում նրանց գնդակը Պեռլին, Հռոմ, Թիֆլիս, Պոլիս, ուր ասես հասնում, թիրախները դիպուկ խոցում էր: Դէ թող գային իրեն գտնէին Զերաւշանի լեռնաշղթայի քարակարկառներում, Դեյնաուի անդնդախոր՝ մահուան կիրճում: Էնուէրը պատմութիւն լաւ գիտէր, հեռագրեց, որ իրեն անպայման Թերմեզում դիմաւորեն: Կուրբաշիներին, ճատիտներին, սրերը մերկացրած, պատուոյ տողանի կանգնած աւարառու աւազակախմբերի միւս հրոսակապետերին արեւելեան ծիսակարգով ողջունելուց յետոյ մատնացոյց արեց հին ռազմական ճանապարհը, ասաց.

- Այս նոյն ոլորաններով Ալեքսանդր Մակեդոնացին է անցել, պարտուել, գնացել է, Զինգիզ, Թիմուր խաներն են անցել, պարտուել գնացել են: Ես եկել եմ, որ յաղթեմ -մնամ: Թշնամի բանակի հրամանատարն ո՞վ է:

- Եաղուբ Տիւրեան: Ժողովուրդը նրան սիրում, այդպէս է կոչում: Էնուէրը արհամարհանքով ծամածռեց դէմքը .

- Ի՞նչ է նշանակում որ...

-Յակոբ զօրապետ:

Փաշայի բեղերը միանգամից ցցուեցին.

- Հայերն այս կորած-մոլորած լեռնաշխա՞րհն էլ են հասել:

- Ո՞ր են հասել՝ նրա հետախուզութեան պետը Սուրէն Դոլունցն է, ռազմայեղափոխական գլխաւոր բիւրոյի լիազօրը Սահակեանը, «Սամարղանդ» նաւի կոմիսարը՝ Աբրահամեանը, հեծեալ միաւորման յատուկ բաժնի պետը՝ Սարուխանեանը, Տօնեանի, Թելեանցի, Մկրտչեանի, Նարինեանի, Բարսեղովի մասին էլ չենք ասում:

- Ախր գիտէի, որ դրանք ազգ չեն, ապրելու իրաւունք չունեն,- Թունոտուեց Էնուէրի ձայնը, սնկի նման՝ ինչքան գլուխ ները կտրում ես, էնքան բազմանում են: Ես հախից կը գամ Եաղուբ Տիւրեան,- յանկարծ ցասումով ոռնաց նա,- քեզ իմ ձեռքերով ցցի կը նստեցնեմ:

Ասաց, ցոյց տուեց...

***

Յակոբ Մելքումեանցին 1-ին հեծեալ բրիգադի հրամանատար էին նշանակել, յատուկ իրաւասութիւններ շնորհել, բայց էլի Սողոմոն Թեհլերեանին, Արամ Երկանեանին, Արշաւիր Շիրակեանին նախանձում էր: Տղամարդու պէս կանգնել էին հայասպանների դիմաց, զէնքը ճակատներին պարպել: Ինքն ու Էնուէրը բանակներով էին իրարու դէմ կռւում ու ինչ մարտավարութեան էլ որ դիմում էր, վերջին պահին ճիւաղը բասմաչներին թողնում, ճողոպրում էր:

Ու դեռ գլուխ էր գովում.

- Էդ Եաղուբ կոչուած հայը բռանս մէջ է: Ոնց որ կատուն է մկանը որսում, հետը խաղում, նոյնն անում եմ ես: Երբ ուզենամ հում - հում կ'ուտեմ: Վիրաւորականն այն էր, որ նրան հաւատում էին, քանի որ խալիֆի փեսայ էր, մարգարէ էին համարում, ոտնատակի հողը խլխլում, լուծում էին ջրի մէջ, խմում: Հիսարի Օլուխա «կուլի բեկը նրան նուէր բերեց իր 12 տարեկան դստերը, Պուխարայի էմիրը բարձրագոյն շքանշանով պարգեւատրեց, բրիտանական բանակը գեներալի համազգեստ ընծայ ուղարկեց: Այս ամէնից յետոյ էլ Էնուէրը իւրայինների վստահութիւնը չէր արդարացնում, ոչ միայն Եաղուբ Տիւրեայի հետ հաշուեյարդար չէր տեսնում, առճակատումներից էլ էր խուսափում: Վերջը մի քանի վստահելի բասմաչ գտաւ, հայ զօրավարի գլուխը բերելու համար ոսկով 10 հազար ռուբլի խոստացաւ: Բան դուրս չեկաւ: Թուրքը ի՞նչ է անում, երբ չի կարողանում յաղթել թշնամուն: Դիմում է խարդաւանանքի, նենգադաւութեան: Նոյնը Էնուէրն արեց: Նստեց, իր ձեռքով գրեց.

«Հեծեալ բրիգադի հրամանատար Մելքումովին Անչափ գոհ եմ քո մատուցած ծառայութիւններից, շարունակիր բթացնել ռուս հրամանատարների զգօնութիւնը: Քո յետագայ առաջադրանքները

Շար.ը էջ 20

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՅՑԸ ՍՓԻՒՌՔՈՒՄ...

*ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ*

*Հայը լինելով ամէն ասպարէզի մէջ գործունեայ, զարմանում է, երբ իր բնակած երկրում բացակայում է տուեալ երկրի հասարակական ու քաղաքական գործունէութեան որեւէ ասպարէզից և ձգտում է այդ բացը լրացնել, երբ ստեղծւում են նպաստաւոր պայմաններ՝ անկախ ժամանակից, քաղաքական դժուարութիւններից ու այլ պատճառներից:*

*Տուեալ գործունէութեան ապացոյցը, Թուրքիայի կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանութեան հետեւանքով Արեւմտահայաստանում ու Կիլիկիայում այդ գործընթացի (քաղաքականութիւն, առեւտուր, բանկային համակարգ եւ այլն) իսպառ վերանալուց յետոյ, որը ամբողջութեամբ գտնւում էր հայերի ձեռքին, ցեղասպանութիւնից մազապուրծ հայերի հիւրընկալ երկրներում հաստատուելն ու այնտեղ ձեռնամուխ լինելն էր վերականգնելու վերոնշեալ գործընթացը: Հայոց ցեղասպանութիւնից համարեա 100 տարի յետոյ՝ ներկայումս այդ գործընթացը մեծ թափով է առաջ ընթանում բոլոր հայաբնակ երկրներում, նպաստելով Հայ Դատի եւ հայապահպանման գործընթացին՝ նաեւ ստեղծուած նոր ասպարէզներով՝ տեղեկատուութիւն, հեռուստատեսութիւն եւ այլն:*

*1960-ականից սկսեց աստիճանաբար ճռնչալով բացուել Խորհրդային Միութեան «Ժանգոտած երկաթեայ վարագոյրը»: Ժողովրդի հոսքը այնտեղից եւ հայի համար շատ ցաւալի՝ Խորհրդային Հայաստանից եւս սկսեց դէպի արտերկրներ ու ոչ մէկը չէր կարող պատկերացնել սարսափելի իրականութիւնը Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, որը ոչ մէկի մտքովն անգամ չէր անցնում, երբ սկսեց դատարկուել մեր հայրենիքը՝ 70 տարի բարգաւաճած համարեա 4 միլիոնից աւելի բնակչութեան կէսը յայտնուեց աշխարհի տարբեր երկրներում՝ հիմնականում Ռուսաստանում եւ ԱՄՆ-ում: Արտագաղթածները կարծէք թէ բանտից էին ազատ արձակուել: Իրենց հաստատուած երկրներում նրանք զարմանում էին ամէն ինչի վրայ, որոնք յայտնի չէին նրանց Խորհրդային Միութիւնում: Նրանք նկատեցին շատ կարեւոր բաներ այդ երկրներում, որտեղ արդէն ապրում էին հայեր, որոնք սերտօրէն կապուած լինելով Հայրենիքի հետ, տքնաջան աշխատանք էին կատարում Հայ Դատի առաջընթացի համար՝ նրա գործունէութեան մէջ ընդգրկելով հայ նոր սերնդի և տուեալ երկրի ժողովրդի հետ իրենց սերտ յարաբերութիւններով ստեղծուած շրջապատի ազդեցիկ անհատների եւ պետական գործիչների, որպէսզի վառ պահէն ցեղասպանութեան զոհ գնացած անմեղ նահատակների յիշատակը, պահանջատիրութիւնն ու հայապահպանումը, որոնք տքնաջան աշխատանք ու հսկայական միջոցներ էին պահանջում: Հպարտ ենք, որ մեր նպատակների իրագործման ճանապարհին ընկալուածից աւելի շատ արդիւնքների ենք հասել, չնայած դրանք դեռ բաւարար չեն մեր նպատակները ամբողջացնելու համար...:*

*Քաղաքական պայմանների բերումով, 20-րդ դարի վերջին տասնամեակներում տարբեր երկրներից ԱՄՆ-ում հաստատուած հայերը միանալով տեղաբնակ իրենց հայրենակիցներին, աւելի աշխուժացրեցին Հայ Դատի և հայապահպանման ուղղութեամբ տարուող աշխատանքները միասնական ճակատով՝ մասնակցութեամբ ՀԲԸՄ-ի, հայկական երեք աւանդական կուսակցութիւնների՝ Սոցիալ-Դեմոկրատական Հնչակեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական, յարանուանութեան, հայրենակցական միութիւնների, բազմաթիւ այլ կազմակերպութիւնների ու նուիրուած անհատների:*

*Հայ սփիւռքը հզօրանում է ե՛ւ տնտեսապէս, ե՛ւ քաղաքականապէս, չզլանալով իր օգնութիւնը նաև հայրենիքի բարգաւաճման գործընթացին, որը դեռեւս բաւարար բարձրութեան վրայ չէ՝ Հայաստանի պետական գործիչների անհեռատեսութեան եւ միայն իրենց գրպանների շահերի մասին մտածելու հետեւանքով, որից տուժում է ժողովուրդը ու գնալով մեծ թափ է ստանում արտագաղթը, որը, եթէ այսպէս շարունակուի կործանման եզրին կը հասցնի Հայաստանը (այն արդէն մօտ է դրան):*

*1978 թ. Դեկտեմբերի 20-ին ոտք դրի Լոս Անճելոս, 15 օր Իտալիայում մնալուց յետոյ, որի ընթացքում տեսայ տարբերութիւնը իմ ապրած երկրի եւ ազատ աշխարհի միջեւ: Ապրուստի միջոց հայթայթելու մեծ դժուարութիւններ ունեցայ: Դրան զուգահեռ աշխատում էի անգլերէն սովորել, ծանօթանալ քաղաքի հետ: Երբ սկսեցի դիտել ամերիկեան հեռուստածրագրերը, հսկայական տարբերութիւն զգացի Խորհրդային Միութեան եւ Ամերիկայի հեռուստահաղորդավարների միջեւ: Խորհրդային Միութիւնում հեռուստահաղորդավարները կաշկանդուած էին, հաղորդման ժամանակ իրաւունք չունէին աւելորդ շարժում և նիւթի լրացուցիչ քննարկում կատարելու, համարեա անշարժ նստած՝ նրանք կարդում էին տուեալ ժամի համար նախօրօք պատրաստուած ծրագիրը և հեռանում բեմից, հակառակ՝ ԱՄՆ-ի հեռուստահաղորդավարների անկաշկանդ շարժման ու նիւթերի ազատ քննարկման:*

*Անկախ այն բանից, որ գունաւոր հեռուստատեսութեան եւ լուսահեռագրութեան գիւտարարը եղել է Յովհաննէս Աբգարի Ադամեանը (Մայիս 2, 1879-Դեկտեմբեր 9, 1932), հեռուստացոյցը Խորհրդային Միութիւն մուտք գործեց միայն 1950-ական թուականներին: Գիւտարարի մասին որոշ տեղեկութիւն յայտնեմ անտեղեակ ընթերցողին: 1907-1908 թթ. Ադամեանն ստացել է երկգոյն հեռուստատեսութեան, իսկ 1920-ին՝ «Հեռաւորութեան վրայ պատկերներ հաղորդելու ապարատի» արտօնագիր: 1930-ին նա իրականացրել է առաջին լուսահեռագրի հաղորդումը Մոսկուայից Լենինգրադ (այժմ՝ Պետերբուրգ): 1925-ին նա ներկայացրել է գունաւոր հեռուստատեսութեան (եռագոյն) համակարգի առաջին նախագիծը: 1951-1953 թթ. ԱՄՆ-ի «Կոլումբիա» ընկերութիւնը Ադամեանի համակարգն ընդունել է որպէս կայուն համակարգ եւ կիրառել գունաւոր պատկերներ հաղորդելու համար:*

*Հայերը ընդունակ և ի վիճակի*

*Շար.ը էջ 18*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ 80- ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

# ԷԴՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ

*ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ*



*80 տարի առաջ, 1934-ի Օգոստոսին հիմնադրուեց Հայաստանի գրողների միութիւնը (մինչ այդ մի շարք գրական միաւորումներ որոշակի գործունէութիւն արդէն ծաւալել էին), առաջին նախագահը՝ Դրաստամատ Սիմոնեանը, միութեան աշխատանքները ղեկավարեց ստեղծման օրից մինչեւ 1937 թուականը: Խորհրդային շրջանում ՀԳՄ-ն գաղափարական ազդեցիկ կազմակերպութիւն էր, հայաստանեան գրական կեանքը կազմակերպող միակ միաւորումը, որն իր ազդեցութեան շրջանակում էր պահում գրական միտքը, շարժումներն ու հոսանքները, ենթարկելով դրանց խորհրդային գաղափարախօսութեան՝ սոցռեալիզմի ստերեոտիպային կանոնակարգուած մտածողութեանը: Ստեղծուած հեղինակութիւնները իրենց գործունէութեամբ եւ ստեղծագործութեամբ հիմնականում ծառայում էին իշխող գաղափարախօսութեան քարոզչութեանը՝ հասարակական շերտերում ձեւաւորելու համապատասխան մտածողութիւն եւ կեղծ իտէալներ: Միաժամանակ ստեղծագործական միտքը, որքան էլ կաղապարուած, արթուն էր, ներքին հակադրութիւնը ծնում էր այլ արժէքներ: Յայտնի է եւ պատմական օրինաչափութիւն, միշտ էլ գալիս է կեղծ կուռքերի պատուանդանից իջեցնելու ժամանակը, երբ հասարակութիւնն իր ընդերքում հասունացնում է նոր շարժումներ, նոր հոսանքներ, որ չնայած կարող են ծնուել նաեւ տարերայնօրէն, սակայն՝ անհրաժեշտաբար, եւ առաջ են գալիս նոր մտածողութեամբ անհատներ, արուեստագէտներ, որոնք կոչուած են փոխելու իրենց ժամանակի դէմքը, ուղղորդելու հասարակական միտքը: Այդպիսի դեր կատարեցին բոլոր նրանք, ովքեր գեղագիտական այլախոհութեան շարժման գաղափարակիրներ էին. եւ սա պատահեց արուեստի բոլոր բնագաւառներում: Նրանց վիճակուած էր ճանապարհ հարթել գեղարուեստական նոր մտածողութեան, ստեղծել պատկերաւորման նոր համակարգ, եւ բանաստեղծների, արձակագիրների մի սերունդ եկաւ, որ մեր գրական միջավայրում, լեզուամտածողութեան մէջ իսկապէս յեղաշրջում արեց՝ արուեստի ճշմարիտ արժէքներ, թարմ շունչ բերելով գրականութիւն: Այդ գրականութիւնը բնականաբար չընդունուեց գրական նոմենկլատուրայի կողմից, երկար տարիներ նրանց գրքերը հրատարակչութիւններում տպագրութեան էին սպասում, մինչեւ աւելի բարենպաստ ժամանակներ եկան:*

*Անկախութեան տարիներին ստեղծագործական միաւորումնե-*

*Շար.ը էջ 19*



# ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ՝ ԹԱՄԱՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

*ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ*

Միշտ չէ որ բախտ կը վիճակուի ներկայացնելու իսկապէս տաղանդաւոր բանաստեղծ մը: Տաղաչափական ծանծաղուտին մէջ, սովորական դարձած է աջ ու ձախ շռայլել «բանաստեղծ»ի վսեմական կոչումը, յանդ ու չափի հասարակ որսորդներուն: Այսօր սակայն, մեզի վիճակուած է այդ բացառիկ բախտը, եւ ես մեծ հաճոյքով պիտի ջանամ ներկայացնել իրաւ բանաստեղծ Թամար Յովհաննիսեանը՝ որպէս վկայագիր ունենալով իր բանաստեղծական վերջին հատորը՝ «Լինելութեան Համանուագ»ը:

Նորեկ մը չէ ան բանաստեղծական անդաստանէն ներս: Նախ, մօտ քսան տարիներու լուռ եւ հետեւողական ջանասիրութեամբ իր զարգացող սէրը կայ գրականութեան հանդէպ, հարուստ՝ խոկումներով, խորացումներով եւ անշուշտ փորձարկումներով: Ան նախընտրած եւ դիմած է մեր բանաստեղծութեան վճիտ ակնաղբիւրներէն՝ Վահան Թէքէեանի սիրերգութեան, անկից ներշնչուելու, տոգորուելու եւ ինչու չէ նաեւ սորվելու քերթողական արուեստի հրայքն ու նրբութիւնները, եւ խոր ներթափանցումներով լոյս աշխարհ բերելու «Վահան Թէքէեանի սիրերգութիւնը» խորագիրով իր սքանչելի ուսումնասիրութիւնը, արժանանալով Երեւանի «Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան հիմնարկութեան» շնորհած «Բանասիրական գիտութիւններու թեկնածու»ի պատուաւոր կոչումին: Ունի նաեւ՝բանաստեղծական իր առաջին հատորն ալ՝ «Կինը» խորագիրով:

Գեղեցիկ զուգադիպութեամբ մը, ճիշդ այս օրերուն, երբ կը վերընթերցէի Նիկողոս Սարաֆեանի նշանաւոր յօդուածը Վահան Թէքէեանի մասին, հոն հանդիպեցայ լինելութեան եւ բանաստեղծութեան զուգահեռ սահմանում մը, զոր կ՚ուզեմ մէջբերել, իր յայտնաբերող բնոյթին համար: «Բանաստեղծութիւնը» կ՚ըսէ Սարաֆեան, «...կապտել է իրերուն եւ էակներուն խորէն հոսող հոսանքը: Իսկ լաւագոյն բանաստեղծութիւնը այն է, որ կը ձեւաւորուի ներքին, մարդկային ողբերգական Լինելութեան մէջ»:

Արդարեւ, «Լինելութեան Համանուագ»ը, իր 480 էջերուն մէջ կը պարփակէ լինելութեան այդ բարդ ու ներքին յուզաշխարհը, ուր, լուռ բայց խոր ալեբախումներ կը ծաւալին, ողբերգականէն մինչեւ լաւատեսութեան նշոյլներուն հասնող, եւ որոնք կը հարթեն լինելութեան մը դժուարին ուղին, կերտումն ու բիւրեղացումը, իր բոլոր հանգրուաններով, իր մութին ու լոյսերով:

Պատահական չէ որ բանաստեղծը, այս յուզաշխարհը երկնած ու ձեւաւորած է համանուագի մը տարազով, անոր սովորական ներքին չորս բաժանումներուն փոխարէն, ութ բաժանումներ տալով անոր, շատ դիպուկ ու խօսուն ենթախորագիրներով օժտած: Համանուագի մը նմանողութեամբ ալ, միահիւսուած եւ միաձոյլ ամբողջութիւն մը կը կազմեն անոնք, ստեղծելով մթնոլորտի, կացութեան եւ հոգեվիճակներու ուրոյն աշխարհ մը, ուր բանաստեղծութիւնը կը թեւածէ տիրաբար:

Թամարային համար լինելութեան հասկացողութիւնը ֆիզիքական գոյակերտումէն շատ աւելի անդին գացող, ներքին, հոգեկան ապրումներու տառապալից ձեւակերպումն է, իր այլազան փուլերուն ընդմէջէն անցնող՝ սկսեալ երազանքի, սիրոյ, վերացումի, մենութեան եւ մանաւանդ յուսախաբութեան եւ դժգոհութեան ընկալումներով:

Իր հիմնական դժգոհութիւնը անյարիր շրջապատն է: Նիւթապաշտ աշխա՛րհը, խաբէութեան եւ կեղծիքի մթնոլո՛րտը՝ որուն անհեթեթութեան եւ կարծրութեան բախուելով, գեղեցկութեան, բարութեան եւ արդարութեան ծարաւի իր հոգին, կը տառապի յուսախաբութեան մորմոքով: Ցաւագին, այլատեսակ պատահարներ ու կացութիւններ կու գան սաստկացնելու իր հոգեվիճակին այդ լարուածութիւնը, ուր, շեշտուած է նմանապէս պանդխտութեան, օտարութեան առթած տուայտանքն ալ:

«Յոգնած է մոլորակն իմ,
Յոգնած անցուդարձից այս խելայեղ,
Խոստումներից աղմկոտ ու սին,
Դաւերից, ցաւերից նոր ու հին:
Յոգնած է մոլորակն իմ մեզանից,
Ու անտարբերութիւնը՝ թռչուն մեռած,
Պարզել է թեւերն ազատ,
Քամիների խաբուսիկ ելումուտին՝
Ապրելու խարկանք ցաւագին:
Մենք հանեցինք հողի աչքերը կանաչ
Ու երկնաքերներ առաքեցինք ձիգ՝
Մօտեցնելու համար մեզ Վերինին,
Ու կշեռքը ներդաշնակութեան
Կաղացող շան ոտք դարձաւ:»

Այս բոլորին դէմ յանդիման, զարմանալի չէ որ բանաստեղծը երբեմն ուղեկորոյս՝ տրտնջայ ու ողբայ.

«Ես փետուր եմ շուարած, երկրի-երկնքի արանքում,
Տարուբերւում եմ քառուղիներում անյայտութեան»:

Բանաստեղծին բախումը միայն արտաքին աշխարհին հետ չէ, այլ նաեւ ինքնիր դէմ իսկ, որովհետեւ, ինչպէս կը խոստովանի ինք եւ կ՚ըսէ. «հոգիս երկնչող մանուկ է...» որ տակաւին լրիւ չէ գտած լինելութեան իր ուղիները, եւ, ապաստաններ կը փնտռէ իր հոգեկան մաքրութիւնը փրկելու համար: Իսկ բանաստեղծին համար ի՞նչ ամրակուռ ապաստան քան թէ իր ներշնչումներու աշխարհը, իր բազմածալք ապրումներն ու ստեղծագործական տարերքը՝ որոնց արտայայտման իր միակ միջոցը՝ բառերն են ու լեզուն:

«Հոգիս ապաստան է գտնում մեղեդիների մէջ
Դժուարահունչ ու յոգնած իմ լեզուի,
Ու ամփոփում ուժն այն,
Որը դեռ ապրեցնում է ինձ:»
«...Փարւում եմ հենց քեզ,
Լեզո՛ւ իմ, ոգի՛դ իմ հեզ գոյութեան...
Ընկե՛ր իմ միակ, յո՛յս անդաւաճան,
Տիեզերական առուփախի մէջ
Դո՛ւ ես ապաստան հոգուս փրկութեան:»

Իրադրութեան այս լարուածութեան մէջ, բացարձակ լոյսեր, կամ հեշտ ճշմարտութիւններ չկան բանաստեղծին իմացութեան համար, այլ միշտ երկուութիւն մը կը չարչրկէ իր հոգին.

«Կիսաբաց դուռ եմ, որի շեմին
Դրախտն ու դժոխքը դրացիներ են,
Ու աչքերս՝ յոգնած պատուհաններ
Մերթ իմ դրախտի, մերթ իմ դժոխքի,
Դրանք ապրեցնում են ինձ
Թռիչքի ու անկման, գտնումի եւ կորուստի
Սարսափախառն հրճուանքների մէջ...»

Այս բոլոր գալարումներուն մէջ սակայն, վհատութիւնը տիրական չի մնար: Ի վերջոյ, իր մենութեան արգելարանէն դուրս, ընդվզումը սրբազան կը պոռթկայ արարչութեան անողոք վճիռին դէմ.

«Ինձ թեւեր տուր, Տէ՛ր,
Երկինք՝ երազում ճախրելու համար»:

Սէրը, որ կոչուած է ըլլալու փրկութեան իր «երկինք»ը, կարեւոր կռուան մըն է թէեւ, բայց զուարթ, զուլալ ու պայծառ ապրումներու այն նուաճումը չէ տակաւին, մինչդեռ բանաստեղծին ամբողջական տենչանքն է հասնելու անոր երանութեան, նուաճելու զայն որպէս լրումը իր լինելութեան:

«...Ես իմ ներսում կուտակուած սիրուց
Մեռնել եմ ուզում
Քնքշութեան նուաղկոտ ծալքերի մէջ,
Քանզի սիրում եմ ինձ եւ աշխարհն եմ սիրում...
Իմ երգերում հիւր լինելն ուխտագնացութիւն է,
Որից յետոյ ապրողները չեն սարսափում մահից,
Քանզի սէրն իրքը երկնային լոյսի պէս
Գալիս, քնքշօրէն անցնում է
Նրանց հողեղէն ու յոգնած աւիշներում:»

Սէրը ամէն բանէ առաջ, ինքնաճանաչման, ներքին ինքնախուզարկման կարեւոր դրդապատճառ է, որոնելու եւ գտնելու նախ ինքզինք եւ ապա, ինքզինքին ընդմէջէն ճանչնալու եւ նուաճելու սիրոյ միակ կռուան միւսը: Հիանալի պատկերային եւ փոխաբերական մերձեցումով, Յովհաննիսեան բնորոշած ու նուաճած է այդ պահն ու հոգեվիճակը.

«Սիրում եմ փաթաթուել, փարուել ինքս ինձ
Ու մխիթարել ինձ՝ ինձմով,
Երբ սնամէջ անօթ է դառնում տարածքը,
Ուր տեղակայւում ենք երկուքով...
Մինչ զրոյցները մեր՝ թռչուններ կոյր,
Իրար են զարնւում օդում,
Ցաւ են պատճառում՝ փետրաթափ անելով
Մեր անցեալը՝ հազարան հաւքի պէս սիրուն,
Մեզ այցելած յանկարծ ու լքած յանկարծակի...
Սիրում եմ փարուել ինքս ինձ
Ու որոնել ինձ քո աչքերով,
Որ գտնեմ քե՛զ:»

Լինելութեան յաղթարշաւին հիմնական նուաճումն ու պսակումն է ուրեմն, սէ՛րը: Անով, լաւատեսութեան լուսամուտներ կը բացուին եւ կեանքը կ՚իմաստաւորուի եւ կը գեղեցկանայ, այնքա՛ն՝ որ բանաստեղծը կը յորդի անոր վարար ջուրերուն հետ.

«Իմ ափերի մէջ լուսաբացներ կան,
Որ տրտմութիւնն են սրբում քնքշանքով,
Ցուրտ գիշերների՝ խոով աչքերից,
Ու ժպտում օրուան ջերմիկ խոստումով,
Ասես մեր միջեւ չի փոխուել

Շար.ը էջ 19



## Ո՛Չ ՏԱ՛ԷՇ, Ո՛Չ ԱԼ ՀԸԶՊԱԼԼԱ

Շարունակուած էջ 6–էն

հանդիսանան պաղեստինեան պայքարի առաւել մեկուսացումին ու նուազ օրինականութեան:

Այսպիսի վտանգաւոր խաղ մը կրօնի անունով խաղցուած եւ սարկացնող պետութիւն մը անոր միջոցաւ հիմնուած եւ ստեղծուած, իր մէջ ունի ոչինչ՝ բացի խաւարէ եւ անօգուտ դառնալէ, որուն մէջ ո՛չ տնտեսութիւն կրնայ ըլլալ, ո՛չ ուսում, ո՛չ մշակոյթ, ո՛չ արուեստ, ո՛չ ընկերային կեանք, ո՛չ կեանքի ճոխութիւն, ո՛չ մարդկային արժանապատուութիւն եւ ո՛չ ալ փոխադարձ յարգանք մարդոց միջեւ, եւ անշուշտ՝ ո՛չ հանրային եւ ո՛չ ալ անհատական ազատութիւններ: Այլ, նման պետութիւն մը կը դառնայ իսկական սպառնալիք բոլոր այն գործերուն զոր փորձեցին կատարել կարգ մը լուսամիտ արաբներ վերջին մէկուկէս դար երկարող տարիներուն ընթացքին, փորձելով իրագործել վերելք եւ ազատագրում, մասնակցութիւն բերելով արդի աշխարհի ստեղծման մէջ:

Մենք, ստորագրեալներս, որ կը բաղկանանք գրողներէ, լրագրողներէ, ակադեմականներէ, արուեստագէտներէ եւ մշակութային գործիչներէ, կառչելով մարդկային բոլոր վեհ արժէքներուն զորս արդի մարդկային խիղճը որդեգրած է, կ՚ազդարարենք եւ ուշադրութեան կը հրաւիրենք մեր ժողովուրդներն ու հաւաքականութիւնները այն հսկայ փոսին՝ որուն ուղղութեամբ մեզ կը մղէ կրօնական մոլեռանդութիւնը:

Կոչ կ՚ուղղենք նախ եւ առաջ մեր քաղաքացիներուն, եւ ապա հաւասարութիւն եւ ազատութիւն դաւանող աշխարհի բոլոր հաւատացեալներուն, որ մասնակից դառնան մեր պայքարին ընդդէմ հին ու նոր ոճրագործներուն, եւ աշխատանք տանին յօգուտ ազատութեան եւ արդարութեան պահպանման մեր երկիրներուն մէջ, մեր շրջաններուն մէջ, եւ համայն աշխարհի մէջ»:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՃՐԱԳՐԵՐԸ ՍՓԻՒՌՔՈՒՄ...

Շարունակուած էջ 15–էն

են ցանկացած ասպարէզում յայտնուել առաջատար դիրքերում: Բայց ամերիկեան հեռուստացանցում նրանք ձնծաղիկի նման են յայտնւում, որով հպարտանում ենք, որովհետեւ ներկայ ժամանակներում հեռուստատեսութիւնը ամենահզօր տեղկատուական աղբիւրներից մէկն է:

Լոս Անճելոսում բնակութեան առաջին տարիներին հայաստանահայերս լրիւ «կտրուեցինք» հայրենիքի լուրերից, անգլերէն էլ չգիտէինք, որ լուրեր լսէինք ամերիկեան ծրագրերով: Մի քանի փորձեր եղան հեռուստատեսութիւնով լուրեր հասցնելու հայրենիքից Լոս Անճելոս, որոնք յաջողութիւն չունեցան:

Լոս Անճելոսում առաջին հայկական հեռուստածրագիրը Սարգի Մուրադեանի «Armenian Teletime»-ն էր, որը երկար տարիներ ծառայեց եւ ծառայում է հայ համայնքին: Նրան յաջորդեցին բազմաթիւ հայկական հեռուստածրագրեր, մեծ մասամբ հայաստանահայերի նախաձեռնութեամբ, հիմնականում կէս ժամ տեւողութեամբ, և «Horizon» 24-ժամեայ հեռուստածրագիրը:

1988 թ. Դեկտեմբերի 7-ի հայաստանակործան երկրաշարժի ժամանակ Լենինականից հեռուստատեսային ուղիղ հաղորդում կազմակերպուեց, և ամերիկահայ հեռուստահաղորդավարը ցուցադրեց երկրաշարժից սրտաճմլիկ տեսարաններ՝ բացատրելով երկրաշարժի կատարած աւերների, մարդկային բազմահազար զոհերի և ընդհանուր վիճակի մասին, որով Լոս Անճելոսի այդ կադրերը դիտողներս ուրախացանք ու հպարտացանք, չնայած մեր կտտացող ցաւերին, քանի որ լուրերը հաղորդում էր հայ հաղորդավարը եւ ցուցադրում էր երկրաշարժի իրական պատկերը...:

Հայաստանի «Արմենիա» հեռուստածրագրով հեռուստատեսային մի այլ հաղորդում սփռուեց Թուրքիայից 2008 թ., Հայաստանի հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանի Թուրքիայի հետ հաշտեցման «ֆուտբոլային» քաղաքականութեան առիթով, երբ Հայաստանի հաւաքականը Թուրքիայում փոխադարձ հանդիպում ունեցաւ Թուրքիայի հաւաքականի հետ, որի հեղինակը խոստումնալից լրագրողուհի Արմինէ Ամիրեանն էր: Նա նոյնպէս հպարտութիւն պարգեւեց մեզ իր պարզ ու բովանդակալից հաղորդումով Թուրքիայից: Այստեղ ի միջի այլոց նշենք, որ Հայաստանի հանրապետութեան ղեկավարները շատ մեծ սխալ թոյլ տուեցին, երբ Հայաստանի հաւաքականի մարզաշապիկների վրայից ջնջեցին յաւիտեան հայութեան պատկանող մեր Սուրբ լեռան՝ Արարատի պատկերը, որը կոպիտ ասած, հրաժարում էր մեր սրբազան լեռից...: Արարատը հայի գոյատեւման խորհրդանիշն է:

Մեր հայրենիքի անկախացումից յետոյ Հայաստանի երկու հեռուստատեսային կայաններ հիմնադրուեցին Լոս Անճելոսում՝ «USArmenia» և «ARTNSHANT»: «USArmenia»-ն իր մասնաճիւղն ստեղծեց նաեւ Եւրոպայում:

Այս երկու 24-ժամեայ ձրի ծրագրերը մեծ աշխուժութեամբ սկսեցին իրենց հաղորդումները՝ նուիրուած հայ մշակոյթին եւ հայապահպանմանը, այդ ընթացքում ձեռնամուխ լինելով նաեւ հայկական բազմասերիանոց շարժանկարների ստեղծման ու ցուցադրման, որոնց մի մասը ցածր մակարդակ ունենալով, արժանի չեն հայ մշակոյթի մաս կազմելու, որոնք նոյնիսկ հայ ժողովրդի նիստ ու կացը աղաւաղուած են ներկայացնում, որի մասին չգիտեմ ինչու են լռում մեր արուեստագէտ մասնագէտ կինոգործիչները: Սա նրանց թեման է յուսանք, որ մի օր նրանք կ՚անդրադառնան այդ հարցին:

«USArmenia»-ն որոշ ժամանակ գոյատեւեց վարձուած շէնքում, իսկ այսօր ունի իր սեփական շէնքը բոլոր յարմարութիւններով, որոնք անընդհատ կատարելագործւում են:

Երեւանի «Արմենիա» հեռուստածրագրից Լոս Անճելոսի «USArmenia» տեղափոխուեց նաև Արմինէ Ամիրեանը, որը նոր շունչ բերեց հեռուստածրագրին, մանաւանդ իր նոր գործելակերպով յաջողութեամբ թափանցելով ամերիկեան հեռուստացանց ու հաղորդումներ կազմակերպելով Լոս Անճելոսի կարեւ որագոյն միջոցառումներից՝ սկսած Հոլիվուտի աստղերի մրցանակաբաշխութիւնից: Ուղիղ հաղորդումով նա այնպիսի ոգեւորութեամբ է ներկայացնում իրադարձութիւնները «USArmenia»-ով, որ ոգեւորում ու գրաւում է նաեւ դիտողին՝ նրան իր հետ տանելով մինչև հաղորդման աւարտը, միաժամանակ անգնահատելի գործունէութիւն է կատարում հայերի շփումները աւելի սերտացնելու ամերիկեան ազդեցիկ պաշտօնատար անձանց, կարեւոր քաղաքական ու մշակութային գործիչների հետ, որոնց միջոցով ընդլայնւում է հայերի ու ամերիկացիների յարաբերութիւնների սերտացման ու համագործակցութեան շաւաւիղը, մեր նպատակների իրականացման ճանապարհին:

Հպարտութիւն է տեսնել հեռուստացոյցով հայկական և ամերիկեան կարեւոր իրադարձութիւններում «USArmenia»-ի հաղորդավարներին, որոնք, ամերիկեան հեռուստահաղորդավարների շարքին, դէպքերի վայրերից ուղղակի կապով մեզ են ներկայացնում Լոս Անճելոսում տեղի ունեցող իրադարձութիւնների մանրամասնութիւնները հայերէն լեզուով:

Վերջերս «USArmenia»-ն նոր անակնկալներ մատուցեց հայ հասարակութեանը: Սոյն թուականի Մայիսի 11-ին «Global Art»-ի հետ նա կազմակերպեց հայ արուեստագէտների մրցանակաբաշխութեան համաշխարհային մշակութային փառատօն, որը հսկայական աշխատանքի արդիւնք է: Այն տեղի ունեցաւ «Agua Caliente» կազինոյում, որը գլխաւոր հովանաւորն էր, հովանաւորներ էին նաեւ մի քանի հայկական ընկերութիւններ: «Agua Caliente»-ն «գրաւուել» էր աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայ արուեստագէտների կողմից, այնտեղ միայն հայկական շունչն էր տիրում: Հիանալի կազմակերպուած ներկայացում (շու) էր, որը ոչ միայն չէր զիջում ամերիկեան մրցանակաբաշխութեան փառատօներին, այլ նրանց նսեմացնում էր իր հայկականութեամբ ու ազգային ոճով զարդարուած սրահով: Հակառակ ամերիկեան աստղերի թանկարժէք հագուստներին, որոնք միայն ժողովրդին ցուցադրելու համար են պատրաստւում, սրահում ժողովրդին ներկայացան հայկական հարուստ նախշազարդերով գեղեցիկ տարազներով հայ աստղերը՝ իրենց հայկականութեամբ ու բոյրով: Կազմակերպուած այս հայկական փառատօնը նոյնիսկ գերազանցում էր ամերիկեանին, որի համար արժանին պէտք է մատուցել կազմակերպիչներին, շնորհակալութիւն յայտնելով և շնորհաւորելով նրանց այս առաջին յաջող կազմակերպուած հայկական փառատօնի առթիւ եւ նորանոր յաջողութիւններ մաղթել յաջորդ փառատօները էլ աւելի ճոխ կազմակերպելու գործում: Ես, կարծում եմ նաեւ իմ նման շատ-շատերը, յուզումով ու ազգային հպարտութեամբ դիտեցին փառատօնի յուզումնալի բացումը, որը միաժամանակ սփիւռքահայութեան կոչ էր վերադառնալ իր Հայրենիքը: Ջմտնելով խորքի մէջ, նշեմ, որ ես երկու անգամ դիտեցի այն մեծ յուզմունքով ու հպարտութեամբ: Ջթուարկելով մասնակիցների անուններն ու ստացած մրցանակները նշենք, որ ընտրուած էին հայկական լաւագոյն երգերի փունջ, որոնք մասնակիցների կողմից կատարուեցին բարձր մակարդակով և բոլոր մրցանակ ստացողները արժանի էին մրցանակին: Մեզ մնում է կազմակերպիչներին ասել՝ «վարձքերդ կատար», ցանկանալով նրանց նորանոր յաջողութիւններ հայ մշակոյթի յետագայ զարգացման, հայապահպանման, եւ Հայ Դատի արդար իրականացման ճանապարհին:

Երկրորդ անակնկալը «Glendale Life» reality-իրական ֆիլմի առաջին սերիան էր, որը դեռ չցուցադրուած, համացանցի կայքերով գրավեց ժողովրդի ուշադրութիւնը: Այն ուշադրութեան արժանացաւ նաև ամերիկեան հեռուստածրագրերի կողմից, որոնցից մէկի՝ KNBC-ի ներկայացուցիչը խնդրեց ու հարցազրոյց ունեցաւ «USArmenia»-ի տնօրէն պրն. Բագրատ Սարգսեանի հետ, որով հպարտացանք ու ուրախացանք հայերս, ուրախացանք, քանի որ «USArmenia»-ն մտաւ Ամերիկայի յայտնի հեռուստածրագրերի շարքը: Յաջորդ անակնկալը Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի առթիւ պատրաստուող բազմասերիանոց շարժապատկերն է, որի մասին նշեց պրն. Բագրատ Սարգսեանը Արմինէ Ամիրեանի հետ հարցազրոյցի ընթացքում: Աւելացնեմ, որ շարժապատկերը պիտի ունենայ 12 սերիա, որոնց մէջ Հայոց ցեղասպանութեանը վերաբերող շատ կարեւոր և նորայայտ փաստեր են ընդգրկուելու:

«USArmenia»-ի լուրերի թողարկումը վստահուած է Արմինէ Ամիրեանին եւ յաջողութեամբ է իրականացնում այդ պարտականութիւնը: Մենք նորանոր անակնկալներ ենք սպասում «USArmenia»-ից ի նպաստ մեր հայրենիքի, մեր ազգի, Հայ Դատի, հայապահպանման և այլ ասպարեզներում, որպեսզի հայ ժողովրդի ինքնութիւնը պահպանուի ու ապահովուի սփիւռքում, այդ թւում Ամերիկայում, սիրաշահելով տանտերերին ու ապացուցելով հայի ունակութիւնը՝ հաւասար քայլելու նրանց հետ կողք-կողքի:

Յաջողութիւններ սփիւռքի բոլոր հայկական հեռուստածրագրերին անխտիր, իրենց հայանպաստ գործունէութիւնում:

Նորանոր հաջողութիւններ ցանկանանք նաև բոլորի կողմից սիրված, հարգուած ու ժպտերես մեր խոստումնալից լրագրողուհի ու հեռուստահաղորդավարուհի Արմինէ Ամիրեանին իր ստեղծագործական գործունէութեան մէջ և անձնական կեանքում:

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Սահակեան Սանուց Միութիւնը հետեւեալ նուիրատուութիւնները ստացած է, որոնց համար շնորհակալութիւն կը յայտնէ վարչութիւնը:

| | |
|---|---|
| Սահակեանցի մը | $1,400 |
| Տէր եւ Տիկին Փիէր եւ Ասպետուհի Սիմոնեան | $500 |
| Տէր եւ Տիկին Սահակ եւ Անահիտ Գթըֆեան | $100 |
| Տէր եւ Տիկին Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեան | $100 |
| Տէր եւ Տիկին Յարութ եւ Լուսին Պոյամեան | $100 |
| Տէր եւ Տիկին Վարդան եւ Վարդուկ Գալայճեան | $100 |
| Տէր եւ Տիկին Համբիկ եւ Նայրա Սարաֆեան | $100 |
| Տէր եւ Տիկին Յովհաննէս եւ Սոնա Ճէրէճեան | $100 |
| Տօքթ. եւ Տիկին Արշակ եւ Վարդուկ Գազանճեան | $100 |
| Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան | $100 |
| Տիկին Անահիտ Գլըճեան | $100 |
| Տէր եւ Տիկին Յակոբ եւ Միմի Ատալեան | $60 |

## ԷԴՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ

*Շարունակուած էջ 15-էն*

*րի կարգավիճակը, գործունէութեան ծաւալները փոխուեցին, հասարակական կազմակերպութեան վերածուած այս միաւորումները յայտնուեցին աւելի դժուար վիճակներում, կորցնելով նախկին ազդեցիկութիւնն ու պետական հովանաւորութիւնը, նրանց գործունէութիւնը թէեւ սահմանափակուեց, սակայն դարձաւ աւելի անկախ՝ գաղափարական եւ այլ առումներով: Ներկայում ՀԳՄ-ն շարունակում է գրական գործի կազմակերպումը, ընդարձակուել են կապերը սփիւռքի գրական շրջանակների հետ, դրանք աւելի ակտիւացել, սերտացել են, մասնաւորապէս Հայաստան-Սփիւռք համաժողովները նպաստեցին դրան, բազմաթիւ միջոցառումներ, շնորհանդէսներ, յոբելեաններ են կազմակերպւում: ՀԳՄ-ն ունի տասնմէկ բաժանմունք՝ արձակի, հրապարակախօսութեան, պոէզիայի, դրամատուրգիայի, գրականագիտութեան եւ քննադատութեան, թարգմանական, երիտասարդական եւ այլն, մասնաճիւղեր են ձեւաւորուել Հայաստանի մի շարք մարզերում եւ Արցախում, ունի հրատարակչութիւն, տպագրատուն եւ գրատուն, իհարկէ իր մամուլը՝ «Գրական թերթ», «Լիտերատուրնայա Արմենիա», «Արտասահմանեան գրականութիւն», «Նորք», «Գրական մունետիկ», «Գրեթերթ»:*

*Հայաստանի գրողների միութեան 80-ամեայ յոբելեանը նշուեց Յակոբ Պարոնեանի անուան Երաժշտական կոմեդիայի թատրոնում, Յուլիսի 4-ին, եղան բազմաթիւ ելոյթներ, շնորհաւորանքի խօսքեր, յատկապէս պարգեւատրումներն էին առատ՝ մեդալներ, շնորհակալագրեր՝ տարբեր գերատեսչութիւնների կողմից (ՀՀ վարչապետ, Երեւանի քաղաքապետ, Սփիւռքի, Մշակոյթի, Կրթութեան եւ գիտութեան, Պաշտպանութեան նախարարութիւններ):*

*Մինչ այդ, գեղանկարչական երկու ցուցահանդէս՝ ՀԳՄ շէնքի առաջին հարկում մի շարք գրողների նկարչական աշխատանքների (Յակոբ Մովսէս, Էդուարդ Միլիտոնեան, Արեւշատ Աւագեան, Բակուր Կարապետեան եւ ուրիշներ) եւ կլոր սրահում՝ Գեղարուեստի պետական ակադեմիայի կերպարուեստի դեկան Էդուարդ Վարդանեանի՝ գրողների դիմանկարների շարքը, յոբելեանական միջոցառումների սկիզբն էին: Նորութիւն էր նաեւ ՀԳՄ նախորդ տասը նախագահների (Նաիրի Զարեան, Աւետիք Իսահակեան, Էդուարդ Թոփչեան, Վահագն Դաւթեան, Հրաչեայ Յովհաննիսեան, Ռազմիկ Դաւոյեան, Վարդգէս Պետրոսեան, Հրանտ Մաթեւոսեան, Լեւոն Անանեան) լուսանկարների մշտական տեղադրումը շէնքի երկրորդ յարկում:*

### *ՄԻ ԳՈՂՏՐԻԿ ԿԱՄՈՒՐՋ ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ*

*Այս ամենի մէջ ամէնից տպաւորիչը Էդուարդ Վարդանեանի ցուցահանդէսն էր. Գեղարուեստի պետական ակադեմիայի կերպարուեստի ֆակուլտետի երկար տարիների դեկան Էդուարդ Վարդանեանի համար յոբելեանի առանձնայատուկ նշանակութիւնը գրականութեան հանդէպ ունեցած սիրուց է վստահաբար: Տարբեր տարիներին գրողների նրա վրձնած տասնեակ դիմանկարների շարքը իր աշխատանքների մէկ երրորդ մասն էլ չի կազմում: Մեծ մասն արուեստանոցում է:*

*Էդուարդ Վարդանեանի գեղանկարչութեան գունային համադրութիւնը, կտաւի գունային էներգետիկան հաղորդական, անմիջական լինելուց բացի, խորքում անորսալի, ներքին մի շարժում ունի: Նա ասես արթնացնում է մարդու հոգու մէջ քնած հեքիաթը, թեթեւ, նուրբ զգայնութիւններ ծնում դիտողի մէջ, եւ ամենահետաքրքրականը, գոնէ ինձ համար, նկարի ֆիգուրատիւ կերպարից այն կողմ, ետեւում, ֆոնի գունային լուծումների մէջ դրուած գաղափարական «նշաններն» են, նկարի հետ հանդիպման զգայական պահը: Այստեղ միտքդ փորձում է որսալ շարժուող այդ զգացումները, երազի ծուէնները, լողացող պատկերները, որ «խօսում» են ենթագիտակցութեանդ շերտերում: Միաժամանակ նրա նկարչութեան գունային ակտիւ համադրումները եւ իր՝ նկարչի բնայատուկ կենսասիրութիւնը հնչեցնելով լաւատեսական նոտաներ, նկատող հայեացքից չեն կարող թաքցնել այն թախիծը, որ կա նկարների գունային ծալքերում, եւ իր՝ նկարչի աչքերում եւս: Այս մասին նա եթէ լռում է, նկարներն են խօսում, գոյնը կտաւին քսում է հոգուց պոկուած զգացմունքի ծուէններ: Երբ հարցրի՝ դիմանկարների շարքում նկատելի է կանանց բացակայութիւն, նա ասաց. «Կին պոէտների չեմ ճանաչում, հենց այնպէս որ նկարէի, ձեւական բան կը լինէր, վերապրուած պիտի լինի նկարը»: Այս վերապրումի զգացողութիւնն է, որ արուեստագէտը վերածում է գեղարուեստական փաստի: Չգիտեմ ինչու, բայց Էդուարդ Վարդանեանի գրնգուն կապոյտի, թափանցիկ դեղինի ու հեւացող կարմիրի մէջ աւելի շատ թախիծ եմ «շօշափում» ու փորձում եմ հասկանալ մարդու անկատար երազի՝ կարօտի ենթագիտակցական պատճառը:*

*Ահա գրողների դիմանկարները մեր առջեւ են. հայ դասականները՝ Վահան Տէրեանը՝ քնարական շղարշի մէջ, Դանիէլ Վարուժանը՝ ոգու առնականութեան, Յովհաննէս Թումանեանը՝ իմաստուն փիլիսոփայութեան. Վարուժանին աստուածային գրող է համարում, երեւոյթ հայ գրականութեան մէջ:*

*Դիմանկարների այս շարքը նկարչի՝ գրականութեան հետ ունեցած հոգեկան կապի արտայայտութիւն լինելուց բացի, նաեւ իր մարդկային նկարագրի մի կարեւոր կողմն է բացայայտում եւ՝ փնտռուած յատկանիշ: Ինքն ասում է. «Նկարելիս չգիտեմ ինչպէս է ստացուելու, կերպարը ընթացքում յուշում է նկարի կոլորիտը»: Իսկ ես նայում եմ ժամանակի յայտնի գրողների դիմանկարներն ու մտքիս մէջ իր խօսքերն են. «Տաղանդաւոր մարդիկ են, չեմ կարող իրենց նկատմամբ անտարբեր լինել: Այն սէրը, որ ունեմ նրանց գրականութեան հանդէպ, պէտք է վարձահատոյց լինէր...»: Եւ նա՝ այդ սէրը, վարձահատոյց է լինում արուեստով, իր գունագեղ վրձնով: Գունային այս ամբողջ գամման ստեղծում է ժամանակի գրական մթնոլորտի հարազատ պատկեր. Հրանտ Մաթեւոսեանին, Մուշեղ Գալշոյեանին, Յովհաննէս Մելքոնեանին համարում է 60-ականների հայ արձակի առաջատարներից, դէ իհարկէ՝ Պարոյր Սեւակ, Համօ Սահեան: Հենրիկ Էդոյեան, Յակոբ Մովսէս՝ պոէտներ, որ իրենց ինքնատիպ հետքը հայ գրականութեան մէջ թողել են արդէն: Արմէն Շէկոյեան, Դաւիթ Յովհաննէս, Հրաչեայ Սարուխան, Ղուկաս Սիրունեան, Էդուարդ Միլիտոնեան. Ժամանակի գրականութեան մէջ առանձնացող որեւէ ձայն, որեւէ դէտալ անտարբեր չի թողել նկարչին: Այս յատկանիշի մասին էր, որ վերում ակնարկեցի: Մեր այս անտարբեր օրերում յատկապէս, երբ կողքիդ ապրում է մարդը, արուեստագէտը, որ արժեւորել- գնահատել գիտի ուրիշին, որ տեսնել-զգալ կարող է ուրիշի ցաւը թէ հոգսը,- իսկ նրանք հազուադէպ են, - փնտռուած է...*

*Էդուարդ Վարդանեանը, գնահատելով նրանց գրականութիւնը, փորձել է կարդալ հեղինակների հոգեբանութիւնը, որսալ դիմախաղի, հայեացքի, դիմարտայայտութեան ամենայատկանշականը՝ կերպարն աւելի հարազատ դարձնելու համար: Մուշեղ Գալշոյեանի դիմանկարի ետնապլանի գունապատկերը երկակի աշխարհ է ստեղծում. երազն ու երազանքը խառնուած իրար, թանկ մի գաղափար են փայփայում, թերեւս՝ Գալշոյեանի գրականութեան եւ իր նկարչութեան գաղափարական-հոգեւոր հարազատութիւնից եկող:*

*Սա զգացողութիւն է ընդամէնը:*

## ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

*Շարունակուած էջ 16-էն*

ոչինչ:
Ես եմ արիւնը լինելութեանդ ռիթմերը սնող,
Ինձնից զատուելը՝ զատուել է քեզնից:»

*Այս գլխաւոր միասնական թեմաներուն առնթեր, Թամարա Յովհաննիսեանն ունի նաեւ անջատ, որոշ համախմբումի մը մէջ չպարփակուող միաւորներ, որոնք ինքնին բանաստեղծական նուաճումներ են իրենց կուռ բովանդակութեամբ եւ ուրոյն արուեստով: Անոնցմէ կ'ուզեմ անպայման մէջբերել գոնէ մէկ հատը, որպէս նմոյշ, ուր յուզականութիւն եւ մտածում, կը հոսին հեզասահ ընթացքով եւ հազիւ նշմարելի պատկերներով կը փոթորկեն ընթերցողի հոգին, բացայայտելով ժամանակաշրջանի մը անպատմելի ողբերգութիւնը, զոր Մեծ Եղեռն կը կոչենք:*

«Մայրս չունէր օր ծննդեան:
Տեսիլքի պէս կա՜րճ, վաղանցի՜կ,
Եկաւ, չքացաւ աննկատ,
Անտրտունջ, անաղմուկ անցաւ:
Մայրս չունէր օր ծննդեան
Ու չգիտէր ոչի՜նչ, ոչինչ ինքն իր մասին,
Ասես թէ վայր ինկող աստղ էր,
Որ մարմրեց մի ակնթարթ
Ու չքացաւ ճամբի կէսին:
Վերյուշը իր, երա՛զ էր կարճ՝
Տեսիլքի պէս անիրական,
Ձայնը՝ ընծայ վերից,
Շուրթերը՝ գիրգ, մատները՝ չքնաղ,
Կուրծքը լեցո՜ւն, աչքերը՝ ջինջ,
Մայրս չունէր ոչինչ, ոչի՜նչ...
Բայց իրենով մենք ունէինք
Երկինք ու հողն ու նրանց մէջ՝
Պահուած կեանքի հեքիաթը ջինջ:
Մայրս չունէր օր ծննդեան,
Ու չգիտէր ինքն իր մասին
Ոչի՜նչ, ոչի՜նչ...»

*Կարճ, բայց հիմնականը ընդգրկած՝ բանաստեղծական թովիչ շունչով եւ պարզ բառերու շարահիւսումով, հիանալի պատկերուած են հոս հայ մօր նկարագրային գիծերը եւ մանաւանդ՝ եղեռնապուրծ, որբ աղջնակներուն, ապա մայր դարձած իրավիճակը, բացայայտուած՝ «Մայրս չունէր օր ծննդեան», այնքան խօսուն ձեւակերպումով: Վէհն ու գեղեցիկը ընդելուզուած, առանց մեծաբարբառ շռայլանքի:*

*Այս նմոյշով իսկ, անուղղակիօրէն, բնութագրած եղանք բանաստեղծուհիին արուեստի հիմնական յատկանիշները. պարզութեան պարունակով՝ խորութի՛ւն եւ ներքնապեղո՛ւմ՝ վասն ինքնաճանաչումի եւ ինքնակերտումի, արտայայտուած՝ բնականօրէն հեզասահ, վճիտ եւ հիւթեղ լեզուով մը, որ արեւելահայերէնն է, ամբողջովին ձերբազատուած՝ ընդհանրացած օտարաբանութիւններէն ու գաւառային անհարթութիւններէն, եւ, ինչո՞ւ չէ, նաեւ բարեխառնուած՝ արեւմտահայերէնի ալ շունչով ու բոյրով: Իսկ ոճը, որ դրոշմն է անհատականութեան, անբռնազբօս է, առանց ջանքի, անարգել կը հոսի վճիտ ու մեղմածուփ եւ կը թափանցէ ընթերցողին հոգիէն ներս, հոն ստեղծելով նոյնանման ապրումներ կամ փոթորկումներ: Արդարեւ, Թամարան ունի պաշտամո՛ւնքը հայոց լեզուին ու*

«Բառերը արտացոլումներն են մեր հոգիների,
Շողի պէս ցրուած էջերում,
Բառերն աստուածներ են, որ կեանքի են կոչում
Ապրումներ ու յոյզեր՝ վաղամեռ ու սառած...»
Բառի հզօրութիւնը յղկուած ադամանդ է,
Լոյս է գերեվարուած հազարաշեղջ հատումների մէջ...»

*Պէտք է նաեւ անդրադառնալ իր բանաստեղծական պատկերներուն, որոնք տեղին կը զարդարեն ու կը բացայայտեն իր մտածումներն ու յոյզերը, կենդանութիւն, շնչաւորութիւն եւ շարժում ստեղծելով իր քերթուածներուն մէջ: Անոնք արուեստակեալ չեն, այլ կու գան ինքնահոս ձեւով, բնականօրէն, պահին եւ հոգեվիճակներուն պահանջով: Օրինակ՝ երբ ան կ'ըսէ. «Թող մեղեդի հագնի հոգիս,» իսկապէս որ մեղեդիներ կը հագուեցընէ մեր ալ հոգիներուն: Արդէն ա՛յս է կախարդանքը, որ քերթուածը կը վերածէ վճիտ բանաստեղծութեան: Որմէ ներս, Թամարան մուտք կը գործէ, արդար եւ ինքնավստա՛հ նուաճումով:*

*Գալուստը հազա՛ր բարի:*

**Գրաւուած օր**
**Նոյեմբեր 15, 2014**
**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**
**60 Ամեակի Շքեղ հանդիսութիւն**

# ՅԱԿՈԲ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ

*Շարունակուած էջ 14-էն*

գրաբերս բանաւոր կը յայտնի: Իսլամական զօրքերի գլխաւոր հրամանատար՝ Էնուէր»:

Նա երկտողը քառատակ ծալեց, կանչեց մի դեհկանի, յանձնարարեց,

- Այս նամակը Եաղուբ Տիւրեայէն կը տանես, բայց այնպէս կ'անես, որ քեզ բռնեն, խուզարկեն, գտնեն: Մի՛ վախենայ, բան չեն անի: Ռազմայեղափոխական զօրամիաւորման յատուկ բաժնի աշխատակիցները, երբ չտաբում օտար դեհկանի տեսան ու իմացան, որ ուզում է անձամբ բրիգադի հրամանատարի հետ հանդիպել, կասկածեցին: Մեկուսացրին, յայտնաբերեցին նամակը, գլխաւոր հրամանատարին՝ Կակուրինին յանձնեցին:

Նա կարդաց, գլուխն օրօրեց՝ Մելքումովից դաւաճանութիւն չէր սպասում, Տաշքենդ՝ ռազմաճակատի յեղափոխական խորհրդին ուղարկեց: Մի քանի օր անց էլ զօրամասերի հրամանատարների խորհրդակցութիւն հրաւիրեց.

- Բաւական է սիրաշահենք Էնուէրին,- յօնքերի տակից խիստ Մելքումեանցին նայելով ասաց նա,- պէտք է Յուլիսի 18-ից լեռնանցքներում յենակէտեր ստեղծել, աննկատ շրջափակել զօրաբանակն ու ոչնչացնել:

- Այսօր Յուլիսի 14-ն է, ինչո՞ւ չորս օր սպասենք,- տեղից ձայնեց Մելքումեանցը,- ըստ որում Էնուէրի վտանգը պէտք է վերացնել ոչ թէ շրջափակումով ու դարանակալումով, այլ շեշտակի յարձակումով:

- Ես մերժում եմ այդ առաջարկը, ընկեր Մելքումով,- ցուցափայտը քարտէզակալին շրխկացրեց գլխաւոր հրամանա տարը:

Մելքումեանցն անակնկալի եկաւ.

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ ձեզ չեմ վստահում:

Թաշքենդից յատուկ եկել, խորհրդակցութեանը մասնակցում էր ռազմայեղափոխական խորհրդի անդամ Պատուրինը: Կակուրինի վերջին խօսքերը լսելով նա աննկատ դուրս եկաւ սենեակից, իսկ քիչ անց կապաւորը ներս մտաւ, զեկուցեց.

- Հանրապետութեան զինուած ուժերի գլխաւոր հրամանատարը՝ Սերգէյ Սերգէեւիչ Կամենեւը հեռակապի մօտ է հրաւիրում ընկեր Մելքումովին:

- Ո՞ւմ,- ցնցուեց, տեղից ցատկեց Կակուրինը:

- Ո՞ւմ,- ցնցուեցին, տեղներից ցատկեցին զօրամասերի հրամանատարները:

- Յակով Արկադեւիչին,- հանդիստ պատասխանեց կապաւորը: Եաղուբ Տիւրեան գաղտնի բաժին մտաւ: Հեռակապը նոյն ակնթարթին չխչխկաց. «Հրամայում եմ Ձեզ վաղը եւեթ՝ Յուլիսի 15-ին, Ձե՛ր բրիգադի գնդերով, Ձե՛ր ընդհանուր հրամանատարութեամբ, վճռական յարձակման անցնել, ոչնչացնել Էնուէր փաշայի ոճրախմբերը»:

Ռազմայեղափոխական խորհրդի անդամ Պատուրինը Մելքումեանցի թիկունքից կարդում էր հաղորդագրութիւնը: Երբ հեռակապը լռեց, ձեռքը ուսին դրեց, ժպտաց.

- Դէ՛, քեզ տեսնեմ, Արարատի արծիւ, ինձ ամօթով չթողնես:

***

Էնուէր փաշան, չնայած Մելքումեանցի բրիգադին դիմադարձել չէր կարողանում, անընդհատ լեռից լեռ էր փախչում, բայց իրեն անձեռնմխելի, անհասանելի էր համարում: Ինքն իրեն հռչակել էր մահմետական զօրքերի գլխաւոր հրամանատար, Աֆղանստանից մարտական համալրում, Անգլիայից մեծ քանակութեամբ ռազմամթերք էր ստացել: Դրա համար, երբ առաւօտ վաղ համհարզը առանց դուռը թակելու նրա ննջասենեակը մտաւ ու տեղեկացրեց, որ Մելքումեանցի հեծեալ գնդերը սրընթաց ռազմարշաւով զօրակայանին են մօտենում, նոյնիսկ տեղից չշաժուեց: Նա ամբողջ գիշեր հարբել էր, գլուխը ցաւում էր:

- Հայն ո՞վ է, որ յանդգնի իմ հանգիստը խանգարել, մաղձոտեց,- բացի դրանից մեր հետախոյզները տեղեկացրել են, որ յարձակումը Յուլիսի 18-ին է նախատեսւում... Փաշայի խօսքը խզեց Մելքումեանցի հատու ձայնը.

- Գնդացրային հեծելավաշտ, սրարշաւով գրոհի, առա՜ջ...

Էնուէրը ցատկեց անկողնուց, փորձեց համհարզի օգնութեամբ հագնուել, չկարողացաւ՝ ձեռքերը դողում, մարտասերն արդէն պատուհանի տակ էին շաչում: Նա այդպէս փոխանով էլ ձի հեծաւ, փախաւ:

Զօրակայան մտնելուն պէս Մելքումեանցը նախ Էնուէրի ննջասենեակը խուժեց, դռների մէջ հիասթափուած կանգ առաւ: Մահճակալը դատարկ էր: Յատակին ցիրուցան ընկած էին անգլիացիների նուիրած գեներալական համազգեստը, դուրանը, Օսմանեան կայսրութեան մարտական դրօշը, որից նա չէր բաժանւում:

Մելքումեանցի սիրելի հեծեալներից մէկը՝ Վանեա Սաւկոն նկատեց, թէ ինչպէս է մթնել, մռայլուել հրամանատարը:

- Դէ՛ ժպտացէք, ուրախացէք էլի, Եակով Արկադիչ,-թա խանձեց նա,- դուք այսօր 18-հազարանոց բանակ էք ջախջախել, ինչ վերաբերում է այդ արկածախնդրին, թոյլ տուէք իմ դասակով հետապնդումը շարունակել:

- Խոստանո՞ւմ ես, որ ողջ-ողջ կը բռնես, իմ առջեւ կը բերես:

- Խոստանում եմ,- պատուի առաւ Սաւկոն:

Հետապնդումը ուղիղ տասնեօթ օր տեւեց: Էնուէրը 200 հաւատարիմ բասմաչներով, ձիւնածածկ լեռնանցքները, յորդած գետերը ճեղքում, խուսանաւումներով Աֆղանստանին էր մօտենում: Սահմանամերձ Զագան գիւղում միայն թեթեւացածօշունչ քաշեց, որոշեց մզկիթում գոհունակութիւնը յայտնել Ալլահին, որ փրկել էր կեանքը: Հէնց այդտեղ էլ նրան հասան Մելքումեանցի մարտիկները:

- Միանգամից մտնենք, ձեռքերն ու ոտքերը կապոտենք, տանենք,- առաջարկեց կազակ Գրիշկան:

- Չէ՛,- գլուխը տարուբերեց Սաւկոն,- ով ուզում է լինի, աղօթքը խանգարել չի կարելի:

Ամբողջ գիւղը խճողուել էր մզկիթի շուրջը: Աւելորդ զոհեր չտալու համար Մելքումովի մարտիկները դիրքաւորուեցին որոշակի հեռաւորութեան վրայ, սկսեցին սպասել: Բայց Էնուէրին նախազգուշացրել էին կարմիրբանակայինների յայտնուելու մասին, նամազը չաւարտած անակնկալ դուրս թռաւ մզկիթից, նետուեց նժոյգի գաւակն ու սուրաց դէպի Աֆղանստան:

- Կրա՛կ,- գոռաց Սաւկոն:

- Չեմ կրակի,- լցակումեց Գրիշկան,- Եակով Արկադեւիչը հրամայել է ողջ բռնել:

- Կրա՛կ,- կրկնեց Սաւկոն,- հիմա սահմանը կ'անցնի:

Ճարճատեց գնդացիրը՝ «Էս մի կրակահերթը Մելքումովի կողմից, էս մէկը՝ կազակ Գրիշկայի, էս մէկը խախոլ Վանեայի...»:

Ուշ երեկոյեան Իւան Սաւկոն բրիգադի հրամանատարին ներկայացրեց ռազմավարը՝ Էնուէրի գրպանից հանուած հետախուզական խիստ կարեւոր նշանակութիւն ունեցող նամակներ, որոնցից մի քանիսը հրապարակուեցին «Փրաւտայում», ինչպէս նաեւ անձնական կնիքը՝ հետեւեալ մակագրութեամբ՝ «Իսլամական զօրքերի գլխաւոր հրամանատար, խալիֆի՝ Մուհամմետի փոխանորդի փեսայ»:

***

Ճեմալ փաշային դաւած խոտորջուրցիներին գնդակահարելուց յետոյ, Ստալինը, ասես միջի այլոց, հարցրեց.

- Էնուէրի՞ն Թուրքեստանում ո՞վ ջախջախեց...

- Յակոբ Մելքումովի հեծեալ բրիգադը:

- Մելքումովը կա՞յ:

- Իհարկէ, նոր աւարտեց Ֆրունզէի անուան ռազմական ակադեմիան:

- Մերկացնե՛լ:

Պարզ էր, թէ դա ինչ է նշանակում՝ թղթածարները քրքրեցին, գտան Էնուէրի գեղծագրութիւնը: Յակոբ Մելքումեանցն այդ ժամանակ Թուրքեստանի ռազմական օկրուգի հրամանատարի տեղակալն էր, ամառային արձակուրդին էր սպասում, որ կնոջը՝ Ֆրանուլին, զաւակներին՝ Էդիկին ու Էլեային Ղարաբաղ տանի...

Քննիչը դանդաղ թերթում էր անձնական գործը.

- Պատմէ՛ք, տեսնենք:

- Ի՞նչ պատմեմ:

- Ինչպէ՞ս էիք դաւաճանում հայրենիքին, համագործակցում Էնուէրի հետ:

Քաղաքացիական պատերազմի հերոսը քիչ մնաց ծունկ չոքէր:

- Խնդրում եմ,- զառածեց,- ինչ պատիժ ուզում էք տուէք, բայց այդ մեղադրանքից ազատէք: Հասկացէ՛ք, ես հայ եմ, այդ հրէշի նկատմամբ ազգային ոխ, ատելութիւն ունեմ:

- Հա՜, ուրեմն դաշնակցական էլ էք,- գրիչն արագ-արագ շարժեց քննիչը,- դա էլ կ'արձանագրենք: Վերջում այնուամենայնիւ հաշուի առան, որ Կարմիր Դրօշի չորս շքանշան ունի, գնդակահարութեան փոխարէն 20 տարուայ բանտարկութեան դատապարտեցին: Յակոբ Մելքումեանցը ազատ արձակուեց 19 տարի անց, երբ արդէն 71 տարեկան էր:

Հազիւ հասցրեց յուշերը գրել...:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

Bedros S. Maronian
818/500-9585
Siamanto B. Maronian
818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048
805 East Broadway
Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101
• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.